

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	Օրագիր եւ Լրագրութիւն.....	Մ. Ն. ՆՈՐԻԿԵԱՆ
ՎԷՊ	Գնանք ընթերցել (Տփղիսի կեանքից).....	Վ. ՓԱՓԱԶԵԱՆՅ
ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ	Կրանտ զօրապետին մահը.....	ԵԱՆՔԻՆ
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ	Մարիա (ԱԼՖՐԷՏ ՏԸ ՄԻՒՍԷ).....	ԶՕԿ
ԶԱՆԱԶԱՆՔ	Բեդրսպուրկի Քաղաքային բանտը.....	ՀԱՍԿԱՔԱՂ
ՔԱՂՈՒԱԾ ՇԱԲ. ԼՐՈՅ	Արտաքին, Ներքին, Աղբայրին.....	
ՄԻՄՕՆԷ ԵՒ ՄԱՐԻ	(Կղալիէ տը Մոնթէբէն) Թարգմ.....	Մ. ԶՈՊԱՆԵԱՆ

ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱՂՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ.....	տարեկան.....	Կէս ոսկի Օսման.
».....	վեցամսեայ.....	Քառ » »
Գաւառներ.....	տարեկան.....	Կէս » »
Օտար քաղաքներ.....	».....	12 Ֆրանք
Թղթատարութեան ծախք ».....	».....	15 դահ. արծաթ
Մէկ թերթին գինն է.....	».....	60 փարայ

Մասիսի խմբագրութեան վերաբերեալ ո՛ր եւ է գրութիւն կամ նամակ պէտք է ուղղել առ.

Խմբագրութիւն Արեւելք և Մասիս Լրագրաց
Ղալաթիա, Նորասողունեան խան

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՅ

1885

ԳՐԱՐԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՑ ՊՈՐԱՍ

Ղալաթիա, 23 Օգոստոս

ԸՆԹԱՅՔ ՓՈԽԱՆԱԿԱԳՐՈՅ

3 աժիւ Լոստրայի վրայ պանքայի	409 5/8
3 » » » (վճռակն)	409 1/4
3 » Բարիդի » (պանքայի)	23
» » » (վճռակն)	23 7 1/2

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՂՈՅ

Օսմանեան Քանուխտէ

Երէկ երեկոյ քոց.	(Սիւսց. D. Սէ. Ժ)	48 22
Պօրնային քոցուեղէն վերջը	»	48 21
Բերայի մէջ	»	—
Առաւօտուն բացուեցաւ	»	48 21
Բարձրագոյն քիչ	»	48 24
Նաւազագոյն »	»	48 20
Կէս օրին	»	48 20
Փոխաւորութիւն 1858)	A. Սէրի Գ. Կ. Ա. Ո.	34
» 1862)	»	»
» 1860)	»	»
» 1863)	B. » Կ. Բ. »	49 10
» 1872)	»	»
» 1863)	»	»
» 1869)	C. » Կ. Բ. »	48 20
» 1873)	»	»

Իւնիֆիւ Եգիպտական

Երէկ երեկուն քոցուեցաւ	73 45
Այս առտուն բացուեցաւ Գ. Կ.	73 40
Կէս օրին	73 40

ԲԱԺՆԵՏՈՒՄՔ

Սօսիւթէ Ժէնէրալ.....	Գ. Կ. Անգլ. Լ. Բ.	3 24
Քրէտի Ժէնէրալ.....	» » Օսմ. »	6 32
Պանք տը Գոնա.....	» » » »	4 30
Սօս. Շանժէ վայելօր.....	» » » »	3 30
Թրամուէյ.....	» » » »	297 1/2
Բաւմէլի երկաթուղի	Ֆր.	42
Ուլիկտսիօն տը Բրիտիթէ	»	—
Բաժնեթուղի Լաւրիօմի	»	59

Ընթացք դրամոց

Յամանեան ոսկի	դր. ...	400
Օ Ֆրանքոնց	» ...	87 32
Անգլիական ոսկի	» ...	140 48
Բօլ Իմբերիալ	» ...	90 20
Քրիմից	» ...	51 20
Ռուսի թղթադրամ	» ...	8 98
» արծաթ	» ...	89 30
Յիօրին	» ...	8 38
Մէճ. արծ. (տարբ.)	» ...	408 01
Վեցնոց	» ...	402 25

Հինգնոց	» ...	102 20
Մէթալիք	» ...	98
Պղինձ	» ...	—
Թղթադրամ	» ...	—

ԵՐԲՈՐԱԿԱՆ ՊՈՐԱՍ

Լոստոն, 3 Սեպտեմբեր, Ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քոնսոլիտէ	100 1/8
Օսմ. » Սէրի Գ. բացուեցաւ	47
» » » քոցուեցաւ	46 15/16
» » » Ա. »	33 7/8
» » » Բ. »	49 1/2
» » » Գ. »	46 7/8
Օթօման 1871	71 5/8
Փոխաւորութիւն 1877	85 5/8
Պանք Օթօման	44 5/4
Ռուսական փոխաւ. 1873	94 7/8
Եգիպտական միացեալ (Իւնիֆիւ)	66 1/4
» առանձն. (Բրիտիլէթիէ)	90 1/8
Տարա Սանիէ	64
Տօմանիալ (փոխաւ. Բօչիլտ)	87 1/4
Հունգարական պարտաւորութիւն 40/0	—
Փոխաւորութիւն Բարիդի վրայ	—

Վիեննա, 3 Սեպտեմբեր, Ժամ 4 երեկոյ

Փոխաւորութիւն Լոստոնի վրայ	124 65
Օսմանեան երկաթուղի	20 50
Բարիդ, 3 Սեպտեմբեր, Ժամ 3 վայր. 45 երեկոյ	
Յրանաւորն Ռոնթ 4 1/2 0/0	109 27 1/2
» » 3 0/0	81 52 1/2
Օսմանեան քոնսոլիտէ Սէրի Գ. բացուեցաւ	47 05
» » » քոցուեցաւ	47 07 1/2
» » Սէրի Բ. »	49 40
» » » Գ. »	47 40
Օսմանեան երկաթուղի	42 52
» Բէժիի բաժնեթուղի	—

Պանք Օթօման	547 50
Գրէտի Լիօնէ	54
» Ֆրանքիէ	1323 75
Բաժնետոմս Լիօնի	—
Սուէզի ջրանցք	2040
Ռուսական 5 0/0 1877ի	98 5/4
Իտալական Ռոնթ	96 07 1/2
Եգիպտական միացեալ	333 75
Ուսանիական (արտաքին)	57 5/8
Բրիտիլէթի Թիւրք	409 37 1/2
5 0/0 Հիւնական	324 37 1/2
Զէք Լոստրայի վրայ	25 22

Մ Ա Ս Ի Ս

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

34 ԴՐ ՏՈՐԻ

1884 ՕԳՈՍՏՈՍ 24

ԹԻԻ 3784

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՇԱԲԱԹ 24 ՕԳՈՍՏՈՍ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՕՐԱԳԻՐ

ԵՒ

ԼՐԱԳՐՈՒԹԻՒՆ

2.

(ՏԵՒ ԲԷ՝ 3779)

Գերմանիոյ մէջ 13րդ դարուն երեւցած են պարզ թղթեր . բայց առաջին օրագիրները Ֆուկկերներու հովանաւորութեամբ սկսած են : Ֆուկկերները ճոխ և ազնուական գերդաստան մ'էին , և պատմական եղան իրենց մեծագործութեամբ : 16րդ դարու վերջերք՝ այս տունն՝ որ առեւտրական հաշակաւոր տուն մ'էր , չարունակ յաբարերութիւններ ունեցաւ բազմաթիւ թեալ երկիրներու հետ . իւր թղթակիցներն ամեն օր ամեն տեսակ լուրեր կուտային որք կը հրատարակուէին Ordinari Zeitungen անուամբ և յաւելումներով որք Extraordinari Zeitung կ'ըսուէին : Վիէնայի գերբատան մէջ կը գտնուի անոր մէկ հաւաքածոյն 1568-1604 : Ամեն երկրի թղթակից իւր լեզուաւ կը գրէր . հետեւապէս լուրերը հասկնալու համար շատ լեզու գիտնալ հարկ էր :

Գերմանիոյ մէջ առաջին պարբերականը հրատարակողն եղաւ Էկէնօլֆ Էմմէլ , Ֆրանքֆորդի մէջ (առ Մայն 1613) . յետոյ երեւցան Օպերֆօրթաիմ Զայնաի , Աո-խպորթի

Կալէիլը . 1813ին մեծ չարժոււմ մը տեսնուեցաւ հանրական կեանքի մէջ . 1817ին մամուլը սեղմուեցաւ , բայց 1830ին ազատականները շունչ առին և երեւցան Տայէ Թըրիւն , Պերէշէ Ֆրայլան Ֆրայլենդէ , բայց 1851ին ազգային ժողովը (Diète) պատուիրեց ուշադրութիւն ընել օրագիրներու որք յայնժամ սկսան չափաւորել իրենց յօդուածները : 1853ին սկսան երեւիլ ազատական թերթերու չարք մը . իսկ 1848 տարւոյ դէպքերը մեծապէս ազդեցին լրագրութեան վրայ . եթէ օրէնսդրութիւնը շատ նպաստաւոր չեղաւ՝ դոնէ հրատարակութեանց ներքին արժէքը աւելցաւ :

Գերմանիոյ մէջ ամենէն աւելի շատ օրագիր ունեցող երկիրն է Բրուսիա . ասոնց գլխաւորներն են Նայթնալ Զայնաի , Ֆրայլան Զայնաի , Սթընդը Զայնաի , Վոլքէ Զայնաի , Բեռլին Զայնաի , Բրէսլ Զայնաի . 1866էն ետքը աւելցաւ Նոր Զայնաի Ալթէմայն Զայնաի որ կը ներշնչուի Պ. Պրոքսերէն :

Վիճակագրի մը համեմատ Գերմանիոյ մէջ 5,500է աւելի թերթ կը հրատարակուի , ի բաց առեալ 27 այեւայլ լեզուէ գրուած թերթեր :

Պրէքսիի ամենօրեայ թերթերուն մէջ հաւելւ 2-3 հատ կը դառնուի որք ներդրած են ժողովրդեան մօքին . ասոնց ալ մեծ կարեւորութիւն չարուիր : Զորօր . Բլայն Ժոնաւալը նմանութիւն մ'է Բլէյ Ժոնաւալին . Պերլեր Բալալան՝ Տայէ Բալալին :

Ասոնց ընթերցողներն են սպասաւորներու դասն եւ բարձր ընկերութեան դասը , թէ մին թէ՛ միւսը յուզիչ լուրերու ակնդէտ : Երբեմն այս թերթերը իրենք զիրենք կը հերքեն , բայց ընթերցողը ստայօղ լուրերէն այնքան կ'ախորժին որ աւելորդ աշխատու-

Թիւն մը եղած է հերքումը: Լրագիրներուն գալով ասոնք դուրսերը կը կարդացուին եւ կարծողներ կըլլան թէ Գերմանիոյ հանրային կարծեաց թարգմաններն են: Երկու թերթ կայ որոց համար այս կարծիքը ներելի է. մին՝ « Կերմանիա », կըբրական, եւ միւսը Քրեյց Ֆրեյնշաֆտ Կալինգեր: Գերմանական մամուլը կամ հակայ սեղանաւորներուն ձեռքն է կամ կառավարութեան կախեալ: Այս կը ներշնչէ կարգաւ Բոնն, Նոյրպայէ, Նախիմալ Չայնաուի եւ Քեօնիշ Չայնաուի ազատական լրագրերը:

Պաշտօնական գլխաւոր թերթն է « Նորտ տայէ Եկէմայնէ Չայթունի » որուն յօդուածները գրեթէ Պիլմարք իշխանին ձեռքին տակ խմբագրուած են: Գօլօնի Լրագրոյն գործն է կառավարութիւնները դիտել, անոնց փառասիրական դիտումները երեւան հանել, նմանապէս ցոյց տալ անոնց դրամական տագնապներն եւ զինուորական կարողութեան չափը, գերմանական հայրենասիրութիւնը եւ ազգային հպարտութիւնը արթուն պահել: Գերմանական լրագիրներուն ամէնէն իրազէկն եւ հարուստն է այս թերթը եւ ամէն տեղ թղթակիցներ ունի. Պիլմարք իշխանն ինչպէս ամէն բան նոյնպէս եւ մամուլն ձեռք առած է Գերմանիոյ մէջ եւ ըստ կամս կը վարէ ու կը գործածէ լրագիրները:

Միայն Քրեյց Չայնաուի եւ « Կերմանիա » կրնան քիչ շատ անկախ թերթեր համարուիլ: Ասոնց առաջինը ընկերութեան փայլուն դասէն կը պաշտպանուի, որովհետեւ պաշտական հանդէսներու նկարագրութիւնները կ'ընէ, հարսանեաց եւ ամուսնական լուրեր կուտայ առանց մոռնալու ծննդոց եւ վախճանմանց լուրերը: Պատուաւոր մարդ երեւիլ ուզողը բաժանորդ կը դրուի Քրեյց Չայնաուի, որնոր բացարձակ բողոքական թերթ մ'է. ինչպէս « Կերմանիա » աւելի կաթոլիկ թերթ մ'է քան ըզպապ:

« Յրէմսէնպաթ » եւ « Պէրլինըր Թակ պաթ » ասորիքի են մայրաքաղաքին տիկնանց եւ սպայից. քանզի ասոնք իրենց պարուհիներուն անունները եւ անոնք իրենց զարդարանքներուն նկարագրութիւնը կը կարդան պարահանդէսներու հետեւեալ օրերը: Այս տեղեկութիւններէն պէտք է

հետեւցունել թէ Գերմանիոյ մէջ լրագիրները գրեթէ առանց բացառութեան վարչական գործիքներ են: Եւ եթէ միայն լրագիրներ կարդալու համար ըլլար, Գերմաներէն չէր արժէր ուսնիլ:

Հելուեսիոյ ամենէն հին պարբերական թերթը մինչեւ ցայժմ կը հրատարակուի Յուրիխ մէջ ուրբաթ օրերը: 1797 դարուն սկսած է եւ 1740 է ի վեր Պուրբլի ընտանիքին ձեռքն է: Եթէ ուրիշ թերթեր ալ 1897 դարէն մինչեւ ցայժմ կը հրատարակուին: Չորս հարիւրէն աւելի թերթ կը տպուին Հելուեսիոյ մէջ եւ ասոնց կէսէն աւելին գերմաներէն, յետոյ կուգան ֆրանսերէն թերթերը, քանի մը իտալերէն եւ մի անգլիերէն: Կարեւորներն են Լ'Էքօ տիւ Ռօն, Բոօկուէ, Գօնֆէտէ, Քոօնիքէօ Սիւս, Լա Լիպէրթէ, Ժուռնալ տը Ժընէվ, Լը Բէյլի, Ֆէօյ օֆիսիէլ եւ:

Պելճիա երբ անկախ եղաւ (1830), 54 պարբերական թերթ միայն ունէր. 18 տարի ետքը 200-ն անցաւ, եւ տպագրական ազատ օրէնք մը անոնց բազմանալուն մեծապէս նպաստեց:

Ամէնէն տարածեալ եւ ազատական օրագիրն է Indépendance Belge. իրմէ ետքը կուգայ Օպերօնէթ, Ժառնալ դը Լէժ, Լը Մասթի դը Կան: Կաթոլիկութեան պաշտպան թերթերն են, Էմանսէպաթիօն, Ժոռնալ դը Պրիւսիէ, Ժոռնալ դը Սիւլլի, Կան մի քանի կարեւոր թերթեր ալ ինչպէս Էմալ Պելճ, Լա Կալէն, Ինիքի Լիպէալ եւ:

Հոլանտական թերթերն ընդհանրապէս կը շատանան թարգմանելով անգլիական, ֆրանսական եւ գերմանական լրագիրներու յօդուածներն առանց մեկնաբանութեան: Օտար քաղաքականութեան մասին այսպէս, բայց ներքին քաղաքականութեան վրայ լուռ չեն կենար:

Գլխաւոր թերթերն են Dagblad որ Լա Հէ կը հրատարակուի եւ այժմու տիրող կուսակցութեան այսինքն պահպանողականաց գործիքն է:

Het Vaderland, ազատականներու գործի. յետոյ, Ամսթերդամէ Գաւառի, հին ազատականներու թերթը. Standdaard, հակայեղափոխական կուսակցութեան գործի. Ամսթերդամէ Հանրակարգ առեւտրական օրագիրը որ շատ ազդու գործիք մ'է վաճառականներու, շահագէտներու ձեռքին մէջ: Tijd (Ժամանակ) գործի անդրալքեան կուսակցութեան եւ հռովմէադաւաններու, որք ամբողջ Հոլանտիոյ բնակչաց 1/3 մասը կը կազմեն, եւ Wieuwe Rotterdamsche Courant, զարգացեալ ազատականաց գործի, որն որ կարեւոր դիրք մը գրաւած է եւ ամենէն թարմ լուրեր տուող թերթն կը համարուի Հոլանտայի մէջ: 8,000 բաժանորդ ունի եւ փոքր երկրի մը համար նշանաւոր է այս թիւը: Հոլանտական լրագիրներու ցուցակի մը վրայ նշանակուած կը տեսնենք 450 թերթ որք կը հրատարակուին այդ երկրին մէջ: — Պաշտօնական լրագիրն է Staats Courant եւ միակ Ֆրանսերէն թերթն է Le Courrier րը ւս Մեօլ:

Գանիոյ առաջին լրագիրն 1749 ին երեւցաւ գերմաներէն եւ անուոնն էր Berlingske Tidende:

Շուէտի առաջին օրագիրն եղաւ Ordinarie Tidende 1643-1701:

Նորվեգիոյ առաջին թերթն եղաւ Christiania Intelligensselder:

Ռուսիա 1703 ին ունեցաւ իւր առաջին թերթը Մոսկովայի վեհաժողովի, որ կը հրատարակուէր ի Մոսկուա Մեծն Պետրոսի ժամանակ. կայսրն ինքնին կը մասնակցէր խմբագրութեան: 1855 ին այս օրագիրն մի ամբողջ եւ լաւ տպագրութիւնը տրուած է ի Բեդրսպուրկ: Այժմ գլխաւոր խմբագիրն է հռչակաւոր Պ. Կատիօֆ, Ռուսիոյ ամենէն աղքեցիկ հրապարակադիրը, բայց իւր թերթը քիչ ընթերցողներ ունի: Գերական անդրանիկ թերթն եղաւ Միլէր աւիադեմականին հրատարակած Նեթեմեյն-Նայեա սալիկէնիս: Գրաքննութիւնն ինչպէս յայտնի է, մեծ խստութեամբ կը գործադրուի այս երկրին մէջ, ուստի եւ ոչ քաղաքական թերթերն բուն քաղաքականներէն թէ՛ լաւ են թէ՛ բազմաթիւ. ինչպէս

ժամանակաւ ի Ֆրանսա՝ հոս ալ քաղաքական կարծիքներն գրական թերթերու մէջ կը պահուըտին:

Մոսկուայի եւ Բեդրսպուրկի մէջ հրատարակուած 36 ամենօրեայ լրագիրներէն շատերն մասնաւոր նպատակներու ծառայելով շատ բաժանորդ չունին: Միայն Նոյե վրէժի, Նոյսի, Մոսկովայի վեհաժողովի, Ռուսիի Կարգի, Ինչպիսի, Պրաքիտելսկայի վեհաժողովի (պետական լրագիր) ամենէն շատ տարածուածներն են եւ կը հրատարակուին մինչեւ 16 հազար օրինակ:

Ընդհանրապէս աւելի զարգացած վիճակի մէջ են պարբերական շաբաթաթերթը եւ ամսաթերթը. երկու մայրաքաղաքաց մէջ հրատարակուած շուրջ 200 հրատարակութեանց կէսն այլ եւ այլ ամսագրեր են: Այս կարգի թերթերուն ամենէն աւելի տարածուածներն են վեհաժողովի Եւրոպի որ ունի վեց հազար բաժանորդ. Նոյ շաբաթը երկու անգամ հրատարակուող թերթերէն մին է եւ քսան հազար բաժանորդ ունի առեւտրական եւ նիւթական շահերու վրայ գրելուն համար:

Շաբաթականներու մէջ նշանակութեան արժանի են պատկերազարդ եւ երգիծական թերթերն եւ ասոնցմէ Նեյմ ուսական լրագրութեան մէջ ամենէն աւելի բաժանորդ ունեցողն է. Իստա (կայծ) եւ Սթրեթալա զաւեշտական գլխաւոր թերթերն են. իսկ երգիծականներն ընդհանրապէս անբարոյական են:

1880 ի վիճակագրէ մը հասկցուած է որ բոլոր պետութեան մէջ 608 ի չափ թերթ կը հրատարակուէր, որոցմէ 417 ը ուսերէն, 155 ը պետական թերթ, 34 ը լեհերէն, 40 ը գերմաներէն, 10 ը ֆրանսերէն եւ մնացածը ուրիշ լեզուաւ որոց մէջ 7 ը հայերէն:

Լրագրութիւնը Ռուսիոյ մէջ շատ պատիւ չունի, եւ անով զբաղող մարդիկ ալ նոյնպէս յարգ չեն գտած:

Ռուսական ամենօրեայ մամուլը իւր ներքին արժէքով շատ ստոր կը մնայ գերմանական, ֆրանսական եւ անգլիական մամուլին քով:

Հապիւ կը պատահի որ հանրային խնդիրներու վրայ առողջ գաղափարներ արտայայտէ. աւելի արտաքին խնդիրներով

կ'զբաղի քան թէ ներքին, եւ սկզբունքները յեղյեղուկ, ուղղութիւնը փոփոխական, հակասութեամբ լի, բայց մանաւանդ անձնական շահու հակամէտ՝ ռուսական մամուլն եւ հրատարակադիրը՝ որ աւուր անկման մէջ են աւելի քան թէ զարգացման: Իբրեւ ազատական թերթ Ռոսիէ Կոթիքի զոր լի վերանդ յիշեցինք հայոց նպատաւոր է. նոյնպէս բարեկամ են հայոց Թիֆլիզի Նոյնի Սպարէնիէ, Ռոսիէ Վեֆոմիէ, որոյ գլխաւոր խմբագիրներէն մին է Մոսկուայի համալսարանի ուսուցիչներէն Բրոֆէսէօր Ներսէսեան:

Սերպիական մամուլը թէ եւ խիստ երկրորդական կարեւորութիւն մ'ունի նոյն խալիւ երկրին մէջ, այլ գէթ իբրեւ ծանօթութիւն կը նշանակենք օրագիրներու անուններն առանց ուրիշ հետադատութեան: Պէլկրատի մէջ կը հրատարակուին վեց քաղաքական թերթեր, Սըրպիէ Նոյնի, պաշտօնական. Վիպէժ՝ կէս-պաշտօնական՝ յառաջադիմական կուսակցութեան գործիքն է. Ռոսիւնիէ՝ ազատական, Տրոսիէ Օթիէ՝ արմատական. Սիւրիէ Կոթիքի, Նոյնի Կոթիքի գոյն չունեցող թերթեր են:

Գրայիւնէվայ կը հրատարակուի Ռոսիէ-Բոտ արմատական թերթը. Ութիցա՝ Զաւիպիտա՝ արմատական. Վալիէվո՝ Կապիւնչա. Դապաց՝ Դապացիէ կլանի: Գրական թերթերն են Պալանտա Վեւ, Սըրպիէ, տղայոց կրթութեան յատուկ. Զա՝ ընկերվարական թերթ. Պրոտ՝ զաւեշտական:

Մօնթէնէկրօ՝ շաբաթական երկու օրագիր կը հրատարակուի սրբերէն լեզուաւ Զէթինէէ քաղաքը. առաջինն է Կլա Չեւիպիտա (ձայն սեւ լեւին). պաշտօնական թերթն այս է, 14 տարիէ ի վեր սկսած է հրատարակուիլ: Նրկորդին է Զեւիպիտա (սեւ լեւնի) որ 1684ին սկսած է հրատարակուիլ: Այս թերթերու հիմնադիրն է Պ. Բալօլօվիչ՝ Զէթինէի գլխաւորներուն տեսուչը: Նիքօլա իշխանին թիկնապահ Պ. Լիքօվաճ եւ կիմնադիրն զատառու Պ. Մաթափու գլխաւոր խմբագիրներն են այս վերջնոյն որ ութ քառածալ երեսներէ կը բաղկանայ:

Սօֆիայի մէջ տաս օրագիր կը հրատարակուի. պաշտօնական թերթ մը, Սեփեց (Սօֆիա), Թեոֆիտա Գոմիէնիէ, Ալեքսիէ (հայրենիք), Մաթեֆիտա Կլա (ձայն Մակեդոնիոյ), Նեֆեւի (յաւաջ), Տօմաթին (տեսնական օրագիր), Բեւեֆիտա Կլա (պարբերական հանդէս), Ռեֆեւ (գաւառիարակ), եւ Տիֆաթ թրքերէն:

Ֆիլիպէի մէջ կան 13 օրագիրներ, Ռոսիէ օրէնց, Երկրարեւել, թրքերէն, յունարէն, Մաթիտա, Սեֆեւիէ (միութիւն), Նաթիտա Կլա (ձայն ժողովրդեան), Երեւա Պալանտա (հարաւային Պուկարիա), Մաթիտա Վեֆիտա (քառական օրագիր), Զօրա (արշալոյս), ամսօրեայ հանդէս. Նաթիտա (ժողովուրդ), Լեֆե Կե Պալանտա եւ Զեւիտա այս վերջինը թրքերէն, Պոթա (մարտ), Վեֆիտա՝ զաւեշտական:

Ռուսչուքի մէջ՝ Ռոսիէ, քաղբին անուամբ, Սլաֆեւիէ (սլավ), Մաթեֆիտա, Ռաֆեւ (խարբալ) զաւեշտական:

Սլիւնօ՝ Ռոսիէ (միտի) եւ Սեֆեւ (ծիծաղ) երգիծական:

Սլաւա - Զազօրա - Զեֆեւիէ (երկրադործն) եւ Զեւիէ (գիտութիւն):

Վաւնա՝ Լեֆաթ (բժիշկ) եւ մի բժշկական օրագիր. յետոյ Իրաւա (Droit) հայ-գաղիերէն:

(Պոլսոյ մէջ պուկարք ունին մի օրագիր Զօրիցա, արշալոյս):

Ռումանիոյ ամենօրեայ քաղաքական լրագիրներն են Romanul, որ կարեւորագոյն ինչպէս եւ հնադոյնն է ռումանական թերթերուն: Օտար լրագիրներ չատ կը յիշատակեն զայն եւ լուրեր կը քաղեն անկէ: Նախ կառավարական էր, յետոյ եղաւ ազատական, եւ կը հրատարակուի Պուքրէշ:

Vointza Nationala եւ Telegreful կառավարական թերթեր են: Roumania Libera երբեմն սաստիկ ճակատամարտ մը կը մղէր կառավարութեան դէմ, այժմ անոր տրամադրութեան ներքեւ է:

Ռոմանիա, Վեւիպիտա եւ Գաթառֆիներու ձեռքը գործիք մ'է պահպանողական. իւր խմբագրական յոգեւածները ծայրէ ի ծայր կառավարութիւնը կը քննադատեն:

Natiunea, Տէմէթր Պրաթիանօի դործիրն է։ Կառավարութեան թէ եւ աննը-պատ ալ բաւական կարեւորութիւն ունի, չէ թէ այն պատճառաւ որ Տէմէթր Պրաթիանօ ժողովոյ նախագահին եղբայրն է, այլ քանզի շափաւոր լեզուաւ եւ լրջութեամբ կը քննէ հարցերը։

Besboiul (պատերազմ), իրօք պատերազմ բացած է ամէնուն դէմ, թէ՛ կառավարութեան եւ թէ՛ մասնաւորաց հետ եւ շատ կը կարգացուի ճշդիւ անձնականութեանց հետամուտ ըլլալուն համար։

Օտար լեզուաւ Պուրբէշի մէջ կը հրատարակուին մի քանի թերթ, գլխաւորն է Լեռնեան Ռոմի։ սաստիկ հակառակ է կառավարութեան եւ Ռուսիայէն նը-պատ կ'ընդունի։ Իսկ երկու գերմաներէն թերթեր, Պոպուլարն Եւ Պոպուլարն Ֆրայէ Բրեւէ կառավարութիւնը կը պաշտպանեն։ Կայ նա եւ հունգարերէն մի րազիր Bucaresti Hirado, երկու յունարէն Սէլլի եւ Իւթո մի եբրայերէն՝ Hajoze։ Կան չաբաթական թերթեր ուսման երէն գրած որոց մէջ է Լա Ֆրանկօնիէ Ռոմանօ-Էմպլէն, իտալերէնով խառն գրուած։ Կան հանդէսներ, չաբաթական, ամսեայ, եւ ուսմանայ։ չաբաթական հանդէսներու մէջ ամէնէն կարեւորն է Convorbiri litterare (գրական գրուցատրութիւնք), կը հրատարակուի Պուրբէշ եւ համալուսաւոր մարդիկ ինչպէս Մայօռէսքօ, Ճ. Կիքա, Ալեքսանտրի, Գորբ, Նէկրուճճի Էճ յօդուածներ կուտան անոր։ Տնտեսական, կրօնական, աշխարհագրական, բանասիրական, աստուածաբանական, հնագիտական, բժշկական, երկրագործական տեսակ տեսակ հանդէսներ կը հրատարակուին ոչ միայն Պուրբէսթ ալ եւ Ռումանիոյ ուրիշ քաղաքներուն մէջ։

Պաշտօնական թերթեր ունին կառավարական, հանրային կրթութեան, վճարելի ատենին, երկրագործական, հեռագրական եւ թղթաւարութեան վարչութիւնք։

Ձրօսեցուցիչ թերթերն են Լը Կոմի-Փըրանսերէն, Գոմի, Պուրբէշ, Perdaful եւ։

Գաւառները կան քաղաքական թերթեր, ինչպէս Լեռնեան Բաթի, ամենօրեայ, եւ Գոմի, Գրայօլա։ Կալաց կը հրա-

տարակուին քանի մը թերթ, Խօքլան Լաթ-Լաթիօն, եւ կան ուրիշ պաշտօնական թերթեր մի քանի քաղաքներու յատուկ։

Ռումանիոյ սահմանադրութիւնը կատարեալ ազատութիւն թողած է մամլոյ։ ամէն մարդ կրնայ յայտնել իւր կարծիքը համարձակ թէ՛ խօսքով, թէ՛ գրով, միայն թէ այս ազատութեամբ զեղծանողը պատասխանատու է իւր գրածներուն համար։

Կանխաւ արտօնութիւն խնդրելու, եւ րաշխաւորութիւն տալու, յայտարարութիւն ընելու պէտք չկայ։ Լրագիրները ազգարարութիւն չեն ընդունիր, եւ դադարեցունել կամ խախտել զայնս կարելի չէ։

Մէն մի լրագիր պէտք է ունենայ մի պատասխանատու գործակալ, իւր քաղաքային եւ քաղաքական իրաւունքներն վայելող։

Մամլոյ զեղծումներ կը դատուին երդմնեալ դատաւորներու ժողովոյ մը առջեւ, իսկ եթէ արքունեաց դէմ է նախատինքը, սովորական դատարաններու առջեւ դատաստան կ'ըլլայ։

Ձերբակալութիւն տեղի չկրնար ունենալ տպագրական յանցանաց համար։

Մ. Ն. ՆՈՐԻԿԵԱՆ

ԳՆԱՆՔ ԸՆԹՐԵԼ

(Վ.Պ. ՏՓԼԻՍԻ ԿԵԱՆՔԻՅ)

ԹԱՏՐՈՆՈՒՄ

Դ.

Գրիգոր Արծրունին, «Մշակ» լրագրի խմբագիրը դեռ եւս չէր անանկացել, նորա ձեռքն էր դեռ եւս իւր մեծ եւ չքեղ հիմնարկութիւնը, որը գտնվում է «Դիօրցովց» փողոցի վրայ։ Դեռ Արծրունին չէր դադարեցրել թատրոնը ձրիապէս տալու այն խաղացող հայ սիրողների խմբին, որոնք խաղում էին մի որ եւ իցէ չքաւոր ուսանողի օգտին, ուսանողի, որին գիտութեան աշխարհը պիտի շրջէին եւ չորս տարուց յետոյ իբր գիտնական պիտի տեսնէին նրան իրենց հայրենիքում։ Արծրունին, այդ մարդը անանկացաւ, երբ վերջին կոպէկն էլ զոհեց լոյսի համար։ Բայց երբ 1882 թուականն էր

— Դեռ եւս երջանիկ ամիսներ, երբ «Մշակ»ը հազարից աւելի բաժանորդներ ունէր եւ Արծրունին գոհ սրտով խմբագրատունից ցած իջնելով դնում էր իւր բնակարանը թատրոնի մօտից անցնելով, իւր առջեւը դուրս եկաւ դերասանների սենեակից մի երիտասարդ եւ Պ. Արծրունին կանգ առաւ սանդղի առաջին աստիճանի վրայ :

Երիտասարդը հագել էր կլասիքական գիմնազիայի համազգեստ—կապոյտ մահուտից կարուած եւ մինչեւ վիզը պղնձեայ մեծ կոճակներով կոճկած վերարկու, որոյ եղբայրների վրայ կարուած էին սպիտակ ժապաւէն, գլխին մի պրուսական գլխարկ որը նա բռնել էր իւր ձեռքին :

Իսկ Պ. Արծրունին շատ պարզ էր հագնուած. նա կրում է իւր մշտական երկար վերարկուն, ետեւից վզից կախուած վեղարանման կտորը, աչքերին դրած սպիտակ «պէնսնէ» ներքեւ գլխին եւրոպական կոշտ գլխարկը :

— Այո՛, ի՞նչ կայ, հարցրեց Արծրունին իւր սուր աչքերով երիտասարդին նայելով :

— Փորձ կայ, Պ. Արծրունի, ասաց երիտասարդը :

— Հայերէ՞ն ներկայացման :

— Այո՛, ի նպատակ մի չքաւոր ուսանողի :

— Ա՛հ, այո՛, յիշում եմ, շնորհակալ եմ, ասաց Արծրունին, սանդղիկի աստիճաններից բարձրացաւ, իւր մօտի բանալիով բաց արաւ երկաթեայ վանդակը, որոյ միջից երեւում էր ներսի այգին, ներս մտաւ եւ անհետացաւ :

Ուրեմն այդ երեկոյ մի ներկայացում կար Արծրունեոյ թատրոնում, Որքա՞ն տըխրում է մարդ, երբ այժմ կարդում է թատրոնական ազգարարութեանց վրայ «Նախկին Արծրունեոյ թատրոնում» փոխանակ «Արծրունեոյ թատրոնում» :

Ի՞նչ արած. թող հարուստ հայերը ամաչեն :

Գիմնազիստը մի անգամ պտոյտ գործեց չինութեան պատշգամի շուրջը եւ ապա նորէն մտաւ դերասանների սենեակները, այնպէս ազատ, որ կարծես դերասան էր :

Ո՛վ չը գիտէ, որ ամեն մի հայկական ներկայացման, հայ ուսանողները աղատ մըտ-

նում են դերասանների սենեակները եւ բեմը :

Գաղէ ճրագները վառվում էին, մութը կոխել էր, հետզհետէ պատշգամը, ճաշարանը եւ թատրոնի սրահը լեցվում էր : Արծրունի գալէքէյի դրան մօտ մի վառուած լսպտերի վրայ կպցրած բարակ ազդը յայտնում էր, որ ներկայացումը այդ գիշեր էր :

Դերասանները վերջին փորձը վերջացրին, տղամարդիկ իրենց եւ դերասանուհիները միւս սենեակը քաշուեցան հագուելու, իսկ մեզ ծանօթ գիմնազիստը պտտում էր սենեակների առջեւը եւ չէր մոռանում երբեմն դերասանուհիների սենեակը նայել այդտեղ տիկիները հագնվում էին :

Այդ ի հարկէ անպիտանութիւն է, նայել մի կնոջ, որը մերկացած, մի չափով, կանգնել է հայելոյ առաջ եւ հագնվում է. բայց գիմնազիստը երիտասարդ էր, նրա դէմքը թարմ եւ դեղնցիկ, ընչացքը նոր բուսած եւ մետաքսանման միւրօքը հաղիւ մի ստուեր էր ձգում նրա շնորհալի ծնօտի վրայ, հետեւապէս տիկին դերասանուհին (որովհետեւ միայն մէկն էր) թէեւ տեսնում էր հայելոյ միջից երիտասարդին, դէմքը շառագնում էր, սիրտը ուժգին բաբախում եւ վախենում էր, որ մի ուրիշ դերասան չը նկատէ գիմնազիստի իրեն նայելը, դարձաւ, նայեց երիտասարդին, ժըպտեց եւ սենեակի դուռը միակեց. այդ նըշանակում էր .

— Սիրելիս, վատ ժամանակ ես ընտրել ինձ նայելու :

Գիմնազիստը զգաց այդ, կարմրեց, եւ քաշուեցաւ եւ կաթնելով պտտին, մեքենայօրէն անցուղարձ անողներին էր գիտում, երբ մի քնքոյճ ձայն սթափեցրեց նրան. նա դարձաւ եւ իւր մօտ տեսաւ մի չքնաղ դէմք, կարմիր թշերով, սեւ մեծ աչքերով, խիտ ստուեր ձգող յօնքերով—մի խօսքով մի հիանալի դէմք :

— Պարո՛ն, ասում էր գեղեցկուհին—ո՞րն է տիկին Հռիփսիմէի սենեակը :

— Այո է—պատասխանեց գիմնազիստը եւ մատով դերասանուհեոյ սենեակը ցոյց տուաւ :

Գեղեցկուհին բաղխեց դուռը, որը բացուեցաւ եւ գիմնազիստը լսեց, որ դերասանուհին ներս քաշեց նրան գոչելով .

—Օհ, օրիորդ Վարդուհի, համեցէք:

—Վարդուհի, խօսեց ինքն իրեն գիմնազիստը — համապատասխան անուն:

Եւ աչքը չը դարձրեց դռնիցը. օրիորդը ներս մտաւ եւ դուռը փակուելուց առաջ նրա ակնարկը երիտասարդի կրակոտ ակնարկին հանդիպեց. գիմնազիստը նկատեց, որ օրիորդը կարմրեց եւ աւելի ոչինչ չը տեսաւ, որովհետեւ դերասանուհին դուռը փակեց:

—Հիանալի՛ արարած... միմիջեց երիտասարդը տեղիցը չը շարժուելով:

—Պարոն Նիկօլա, լսեցեալ բեմից մի ձայն — շատ վատ տեղ էք կանգնել:

Երիտասարդը դարձաւ եւ բեմի աստիճանների գլխին կանգնած տեսաւ մի դերասան, որը խորհրդաւորապէս ժպտում էր:

—Դուք տեսա՞ք, հարցրեց Նիկօլան յուզմամբ եւ մօտեցաւ դերասանին:

—Որո՞ն, հարցրեց դերասանը — տիկին Հռիփսիմէի՞ն...

—Ո՛չ, ուրիշ մէկին:

—Ուրեմն ուրիշ «ուհի» էլ եկաւ:

Նիկօլան ազատ շունչ առաւ, նա վախենում էր որ դերասանը տեսած լինէր օրիորդ Վարդուհւոյն. այժմեանից արդէն նախանձում էր նա:

Իսկ նախանձը, այդպիսի նախանձը բուռն սիրուց է յառաջանում:

—Վարժեցի տեսնել, պատասխանեց Նիկօլան—բայց թողնենք այդ, ներկայացումը կը սկսէ՞ չուտով:

—Տասը բալէից:

—Ուրեմն ես գնամ նստիմ տեղս:

—Ուրտեղ ես նստելու:

—Օթեակ, որ օթեակը որ դատարկ լինի:

—Շատ լաւ, գնա՛, որտեղ կ'ուզես նըստիր, քանի որ ձրի է:

Նիկօլան դուրս եկաւ թատրոնի սրահը եւ նստեց թիւ 3 կոքրի օթեակը:

Ե.

Օ Թ Ե Ա Կ Ո Ի Մ

Այդ օթեակում ո՛չ ոք էր նստել, առանց նորան էլ ամբողջ Կ-3 օթեակներից երկուսը

միայն բռնուած էին մի քանի հասակաւոր հարուստ կանանցով, որոնց մատներին, ճակատներին, բաղուններին, կրծքերին, ես ի՛նչ գիտեմ ամէն կողմ փայլում էին քարեղէն եւ ոսկեղէն: Նիկօլան ո՛չ մէկին ուշք չդարձրեց. միայն մի թեթեւ ակնարկ ձգեց նոցա վրայ, տեղաւորուեցաւ մի աթոռի մէջ եւ, մտադբաղ, սկսեց մեքենայօրէն բեմի վարագոյրի վրայ երեւցող յայտարարութիւնները կարդալ, որոնք զետեղուած էին քառակուսի մասերի մէջ եւ ամէնից վեր կարդացվում էր.

«Մշակ» Գեղարվեստական Ռեբլ... .

Չեմ տեսել այդ վարագոյրը «Մշակ» ի դադարելուց և Սրժնովիի ձեռքիցը շինութիւնը դուրս գալուց յետոյ. ո՞վ գիտէ, դուցէ ջնջուած են մեծ եւս եւ տառերով գրուած հայերէն այդ դրերը:

Ելեքտրական դանդի առաջին հնչիւնը իմաց տուաւ որ ներկայացումը սկսելու է. այդ միջոցին Նիկօլայի օթեակի դուռը բացուեցաւ եւ երիտասարդը վեր թռաւ տեղից տեսնելով օր. Վարդուհւոյ դէմքը Տ. Հռիփսիմէի հետ:

Օրիորդը կարմրեց եւ ետ քաշուեցաւ:

—Ուրիշ օթեակ մտնենք, դարձաւ նա դերասանուհւոյն, այստեղ մարդ կայ:

—Ա՛, այդ դո՞ւ ես, Պ. Նիկօլա՛, դու չեց դերասանուհին եւ ապա օրիորդին դառնալով ասաց—այստեղ աւելի յարմար է, այս պարոնը իմ ամենաընտիր բարեկամն է:

Նիկօլան արդէն ոտք կանգնած, շնորհալի կերպով զլուխ տուաւ:

—Բայց... միմիջեց օրիորդը:

—Օրիորդ, միջահատեց նորան դերասանուհին, այստեղ ապահով էք, ուրիշ մի դատարկ օթեակի մէջ կարող է մտնել ամէն մի երիտասարդ, իսկ այստեղ Պ. Նիկօլան չի թողնել ուրիշ մէկին մտնելու, այդպէս չէ՞, Նիկօլա՛:

—Անշուշտ, պատասխանեց երիտասարդը աշխուժութեամբ, օրիորդը կարող է բոլորովին ապահով համարել իրեն:

—Ուրեմն ծանօթացէք, ասաց դերասանուհին օրիորդին դառնալով եւ երիտասարդը ցոյց տալով: Ներկայացնում եմ ձեզ Պ. Նիկօլա Խաչատրեանցին, ուսանող, իսկ օրիորդը Վարդուհի Թառուսեանց, ուսանողուհի:

Նիկիօլան սեղմեց օրիորդի դողացող ձեռքը եւ հրամայեց նորան :

Վարդուհին նստաւ , Հռիփսիմէն ժրպտեց երիտասարդին , մի խորհրդաւոր սպասանալից նշան արեց նորան եւ դուռը փակելով փախաւ :

Այդ շարժումը նշանակում էր .

— Հը՛ , դդոյչ կա՛ց , սիրաբանութիւններ չանես :

Նիկիօլան պահ մի նայեց օրիորդի չքնաղ դէմքին եւ օթեակի մէջ դրուած ազդը ձեռք առնելով կամեցաւ տեսնել թէ ներկայացումը քանի՞ արարուած է :

— Քիչ է , մոմաւց նա , երբ տեսաւ որ միայն 4 արարուած է :

Վարդուհին թիկն տուաւ օթեակի կողքին եւ սրահը սկսեց նայիլ . երիտասարդը տեսնում էր , թէ ինչպէս օրիորդի դէմքը աւելի կարմրել էր :

Նա շարժուեցաւ աթոռի վրայ , հազաց եւ

— Օրիորդ , հարցրեց , դուք Գայլանեան ուսումնարանումն էք ուսանում :

Վարդուհին դարձաւ , մի ակնարկ ձգեց Նիկիօլի դէմքին , շառագնեցաւ եւ գլուխը կրծքի վրայ կախելով պատասխանեց .

— Այո՛ , պարո՛ն , իսկ դո՞ւք :

— Ես ուսանում եմ կլասիքական գիմնազիայում :

Վարդուհին , երբ Նիկիօլը առաջին անգամ տեսաւ , չը կարողացաւ նորա դէմքը աւելի լաւ զննել . բայց այժմ օրիորդը հանել էր իւր գլխարկը եւ երեւում էին նորա խարտեաչ մազերը , հանել էր վերարկուն եւ երիտասարդը տեսաւ նորա բարակ մէջքը եւ վայելուչ հասակը ամփոփուած մութ , կանաչագոյն շրջագգեստի մէջ . տեսաւ նորա դէք եւ փափուկ ձեռքերը , որոց մատերը չէր տգեղացնում մի մատանի . տեսաւ փոքրիկ ոտները սեղմած ամառնային կիսակոշիկի մէջ , վերջապէս աւելի լաւ տեսաւ նորա դէք կարմիր այտերը , մեծ սեւորակ աչերը , շորհալի նկարչական բերանը եւ հաղիւ նկատելի կորութիւն ունեցող քիթը :

— Դուք այստեղացի՞ էք , հարցրեց օրիորդը փոքր ինչ աչքերը դէպի նա բարձրացնելով :

— Այո՛ , օրիորդ , ես բնիկ Տփլիսեցի եմ , իսկ դո՞ւք :

— Ես էլ , դուք ծնողը ունի՞ք :

— Միայն մի ծերունի մայր , որոյ միակը ես եմ :

— Իսկ ես ոչինչ չունեմ , բացի մի եղբօրից , ասաց օրիորդը եւ նորա աչքումը փայլեց մի կաթիլ արցունք :

— Ուսանո՞ղ է , վրայ տուաւ իսկոյն Նիկիօլան :

— Այո , նա Ներսէսեան դպրոցում որդեգիր է , պատասխանեց Վարդուհին եւ հետզհետէ գլուխը բարձրացնելով այժմ աւելի համարձակ էր նայում երիտասարդին :

— Գուցէ ես ձեր եղբօր հետ ծանօթ եմ , ի՞նչպէս է նորա անունը :

— Նա Գրիգոր է կոչվում :

— Ձեմ ճանաչում , բայց . . . ասացեք խնդրեմ , օրիորդ Վարդուհի , դուք ի՞նչպէս ծանօթ էք տիկին Հռիփսիմէի հետ :

— Մենք դրացի ենք :

— Ա՛ , ուրեմն դուք Թաղմիստա՞ էք բընակվում :

— Այո՛ , եւ տիկին Հռիփսիմէի տան մօտ եւ մօրքրոջս տունը :

— Ներողութիւն , ժպտեց Նիկիօլան , այնպէս հարցեր եմ առաջարկում , որ դուցէ ձեզ նեղացնեն :

— Ինչո՞ւ պէտք է նեղացնեն , ես չեմ ծածկում , որ մենք աղքատ ենք եւ մօրքրոջս ամուսինն է ինձ կերակրում , պատասխանեց օրիորդը , որը սկսում էր հետզհետէ համարձակութիւն ստանալ եւ ժրպտել . — իսկ դուք , պարո՛ն , հարո՞ւստ էք :

— Հարո՛ւստ , ծիծաղեց Նիկիօլան , ո՛չ , մենք սպրում ենք չափաւորապէս :

Այդ միջոցին հնչեց երրորդ զանգը եւ բեմի վարագոյրը բարձրացաւ :

Նիկիօլան դէմքը խոժոռեցրեց . նա աւելի լաւ կը համարէր որ քեմի միշտ ծածկուած մնար :

Վարդուհին բեմին նայեց , լուծիւնը տիրեց սրահում եւ ներկայացուե՛լ սկսուեց :

Երիտասարդը նայում էր բեմին , բայց յաճախ աչքի տակուց զննում էր Վարդուհու կիսադէմքը , հետեւում պէս ոչինչ չէր լսում ներկայացումից :

Իսկ մենք , որ սիրահարուած չենք , կասենք , որ ներկայացումը կոչվում էր « Աղքատութիւնը արատ չէ » . այդ իսկ Նիկիօլան չէր յիշում :

Առաջին արարուածը վերջացաւ , վարա-

դոյրը փակուեց, օթեակները եւ սրահը դատարկուեցին, բոլորն էլ դուրս գնացին դռաներէն :

— Զը գնա՞նք դռաներէն, հարցրեց Նիկոլան Վարդուհիին :

— Ես աւելի լաւ եմ համարում նստիլ այստեղ, իսկ դուք ազատ էք :

— Ընդհակառակն, ժպտեց Նիկոլան, եթէ դուք չէք դուրս գնալ, ես էլ կը մնամ :

Այս խօսքերը նա մեղմ ձայնով արտասանեց . նոցա հայեացքները միմեանց հանդիպեցին եւ երկուսն էլ կարմրելով միւս կողմը նայեցին :

— Դուք կարող էք գնալ, աւելացրեց Վարդուհին, ես կը մնամ այստեղ :

— Ո՛չ, օրիորդ, ես էլ կը մնամ եւ կը խօսինք, այդպէս աւելի լաւ չէ՞ . . .

Եւ նա իւր չորս կողմը նայեց, վախճանով որ իրեն լսում են . բայց ոչ ոք չկար օթեակների նրբանցքում, վերնայարկում և նոյն իսկ սրահում :

— Մնացէք, դիտեց Վարդուհին, ձեր կամքն է :

— Ասացէք խնդրեմ, օրիորդ, ժպտեց Նիկոլան՝ Վարդուհիին դառնալով, դուք թոյլ կը տա՞ք ինձ երբեմն ձեզ տեսնելու գալ :

Եւ նա մի համարձակ քայլ անել վճռելով, ժպտեց եւ իւր աթոռը մօտեցրեց Վարդուհիին . վերջինս թէ եւ կարմրեց, բայց դէմ չբռա :

— Երբ որ կամենաք, ասաց նա մեղմ ձայնով, բայց ես առաւօտեան ուսումնարան եմ գնում եւ ժամը երկուսին վերադառնում այն տեղից :

— Ես երեկոյանները կը գամ, ասաց երիտասարդը եւ կռացաւ դէպի նորա ձեռքը :

Վարդուհին ուղղակի նորա աչքերին նայեց եւ ձեռքով սկսեց ձեռնոցների հետը խաղալ :

— Շատ լաւ, մրմնջեց նա, կարող էք գալ, ես երեկոյանները տիկնոջ մօտ եմ լինում :

Այդ միջոցին նորա ձեռքից ցած ընկաւ ձեռնոցներից մէկը երիտասարդի ոտքի մօտ :

Երկուսն էլ կռացան վերցնելու, նոցա մազերը կպան միմեանց եւ Վարդուհւոյ

ձեռքը ընկաւ Նիկոլայի ձեռքի մէջ . երիտասարդը սեղմեց նորան եւ մօտեցրեց իւր շրթուներին : Վարդուհին ուժգնութեամբ ետ քաշել ուղեց, բայց արդէն ուշ էր, երիտասարդի հրատապ շրթուները կպան նորա ձեռքերին :

Վարդուհին դողաց եւ նորա գէմը գունաթափուեցաւ :

— Ես ձեզ սիրում եմ . . . ասաց Նիկոլան հաղիւ լսելի եւ կցկտուր ձայնով . . .

Վարդուհին ցատկեց աթոռի վրայից եւ դէպի դուռը դիմեց . Նիկոլան նորան նայեց մի այնպիսի աղաչական դէմքով, մի այնպիսի աչքերով, որ խեղճ աղջիկը մագնիսացածի պէս դարձաւ եւ նորէն նստաւ իւր աթոռի վրայ :

Դժուարը առաջին բառն էր եւ այդ բառն արտասանուած էր :

— Դուք միթէ նեղացա՞ք, մրմնջեց Նիկոլան նորա ձեռքը բռնելով :

Դողում էր այդ քնքոյշ ձեռքը եւ սաստիկ տաք էր :

— Ո՛չ, թոթովեց Վարդուհին, դուք ինձ հետ լաւ չէք վարվում . . .

— Օ՛հ . . . դուք հրեշտակ էք, գոչեց երիտասարդը նորէն նրա երկու ձեռքերը սեղմելով, եւ ձեզ միայն պաշտել պէտք է . սիրելը շատ մեղմ է :

Վարդուհին քաշեց իւր ձեռքերը եւ դէմքը ծածկեց նոցա մէջ :

— Արտասվում էք, գոչեց Նիկոլան յուզուած եւ իջեցրեց աղջկայ ձեռքերը :

Երկու կաթիլ արտասուք դրոշմեցան Վարդուհիի մեծ աչքերից նրա այտերի վրայ եւ այնտեղից ընկան երիտասարդի ձեռքի վրայ . . .

— Աստուած իմ . . . գոչեց Նիկոլան չողելով նրա առջեւ, դուք լա՞ց էք լինում, միթէ ես ձեզ բարկացրի՞, նեղացրի՞ . մի բառ, միայն մի բառ ասէք եւ ես կը թողնեմ ձեզ . հրամայեցէք եւ ես կը հեռանամ, չէ՞ք սիրում ինձ, ատո՞ւմ էք . . .

— Սիրում եմ . . . թոթովեց աղջիկը եւ գլուխը դէպ ի նա կռացրեց :

Նոցա չուրթերը միացան եւ Վարդուհիի մազերը արձակուելով ծածկեցին իւր եւ երիտասարդի համբոյրը թատրոնի պատերից . . .

2.

ՄԵՐ ՎԵՊԻ ՀԵՐՈՍԸ

Ս. Նշան եկեղեցւոյ շուրջը գտնուում են անհամար մանր, նեղ եւ կեղտոտ փողոցներ: Այսպիսի փողոցներից մէկում, մի շքեղ տան ամենավերին յարկի երեք սենեակները գտնուում էին Նիկոլա Խաչատրեանի ձեռքը: Երկու սենեակը գտնուում էին միմեանց մօտ, իսկ նորա տանիքի վրայ կառուցուած փոքրիկ սենեակը Նիկոլայի առանձնարանն էր:

Մի մայր միայն ունէր Նիկոլան, մի ծեր յիսունամեայ մայր, որ քսան տարի այրի էր մնացել, եւ Նիկոլան չէր տեսել իւր հայրը, որից նա ժառանգել էր լաւ կալուածներ: Մայրը ծախել էր այդ կալուածները եւ Նիկոլան կրօնական գիմնազիալի հինգերորդ դասարանը մտած միջոցին միայն իմացաւ, որ իրենք տէրութեան դժբախտան մէջ քսան հազար մանէթ փող ունին չահով տրուած:

Նիկոլայի մայրը մի բարի կին էր, սիրուն էր իւր սրտով, սակայն պահել էր իւր աղքեցութիւնը նորա վրայ եւ երիտասարդը յարգում էր իւր մօրը:

Նորա խկապէս Տիխոնցի չէին, այլ գաւառացի, սակայն Նիկոլան Տիխոն էր ծնուել, այնտեղ սնուել եւ այնտեղ դարձացել: Տասն եւ երեք տարեկան հասակում Նիկոլան կրօնական գիմնազիան մտաւ եւ 19 տարեկան էր երբ թողեց ուսումնարանի վեցերորդ դասարանն. այդ թողնելու անցքը մի պատմութիւն է: Գիմնազիոնի թուաբանութեան ուսուցիչը մի քսանհինգամեայ երիտասարդ էր եւ երբ Նիկոլան վեցերորդը մտաւ, այդ ուսուցիչը նոր դըպրոց եկաւ պաշտօնով: Աշակերտները շատ անգամ նկատում էին, որ պատուելի ուսուցիչը երեկոյանները մի գեղեցիկ կնոջ թեւը մտած, մի ժամի չափ զբօսնում էր Աղէքսանդրեան այգիում եւ ապա իւր ընկերի հետ մտնում էր «Բուսիա» բէստորանը: Նիկոլան յանդուգն էր, սիրում էր արկածների օկանատես լինել, ուստի մի օր իւր ընկերներին ցոյց տալու համար որ ինքը անվախ է, մտաւ «Բուսիա» հիւրանոցը եւ թուաբանութեան ուսուցիչ Լըվէլի ընկերուհւոյ մօտից անցնելու միջոցին

թեւով հրեց նորան: Լըվէլը դարեջուր էր խմում եւ նայում էր մի ուռածափոր պարոնի: Նորա ընկերուհին դարձաւ տեսնելու թէ ո՞վ էր իրեն հրող անբաղաճավարին եւ տեսաւ Նիկոլայի սիրուն դէմքը: Երիտասարդը ժպտեց եւ ձեռքը բերնին տարաւ. գեղեցկուհին, որը ախորժեց Նիկոլայից, ժպտեց:

Այդքանը բաւական էր համարում երիտասարդը եւ պատրաստուում էր դուրս գնալու, երբ Լըվէլը, որոյ աչքից չէր փախել երիտասարդի օդային համբոյրը, իւր ընկերուհւոյն նայեց եւ դարձաւ Նիկոլային:

— Պարոն, ինձ ճանաչո՞ւմ էք, հարցրեց նորան հպարտութեամբ, տեսնելով որ Նիկոլան գիմնազիոնի նշանազգեստ է կրում:

— Ա՛հ, այդ դո՞ւք էք, պարոն ուսուցիչ, ժպտեց Նիկոլան, պատիւ ունիմ ձանաչելու:

— Որի՞ն էիք դիմում այդ անբաղաճավարի...:

«Համբոյրով» ուղեց ասել, բայց չը համարձակուեցաւ եւ իւր շփոթութիւնը ծածկելու համար, դարեջուր լցրեց դաւաթի մէջ:

Նիկոլան տեսաւ որ հետեւանքը վատ կը լինի, ուստի դուրս ծլկուեց (*):

Քննութիւնները շուտով մօտեցան. ամբողջ տարուայ ընթացքում Լըվէլը խէթիւ էր նայում Նիկոլային, մինչդեռ իւր ընկերուհին միշտ ժպտում էր նորան:

Թուաբանութեան քննութեան միջոցին, Լըվէլը մտածեց Նիկոլայից իւր վրէժը առնել եւ նորան առաջարկեց մի այնպիսի ալդերըստական խնդիր որը վերցրել էր «Իլլոստրաշիօն» պատկերազարդ լրագրի գլուարձալիքից եւ որը հանելուկ էր, մի բառախաղ: Նիկոլան շատ աշխատեց լուծելու բայց անկարելի եղաւ, Լըվէլը չարամտօրէն ժպտելով դէրօ նշանակեց եւ յայտնեց որ Նիկոլան դասարանը չի փոխիլ:

Երիտասարդը բարկութեամբ կաւիճը սեւ տախտակին խփեց եւ դուրս եկաւ սրահից: Միւս օրը նա յայտնեց իւր մօրը, որ ուսումը այլ եւս չէ շարունակելու:

(*) Կծիկը դնել:

—Բայց ի՞նչ պիտի անես ուրեմն, հարգրեց խեղճ մայրը:

—Այդ պատրաստուիմ Գերմանիա գնալու:

Մայրը ոչինչ չ'ունէր ասելու:

Գորանից յետոյ շուտով Նիկոլան սկսեց մտնել ամէն դասերի մէջ, ծանօթացաւ դերասանների հետ եւ իւր դէմքով եւ ճարտար լեզուով շուտով կարողացաւ գրաւել ամէնքին դէպի իրեն: Ամէն ներկայացման նա ձրիապէս էր գնում:

Տիկին Հոխիսիմէն իրեն պատիւ էր համարում Նիկոլայի թեւը մտնել եւ թատրոն կամ այգի գնալ. միւս դերասանուհիները շուտով փոխեցին նորան, եւ շուտով Նիկոլան փոխուեցաւ մի «կոմպլիպէնտներ» շաշտը դատարկապօրտ երիտասարդի:

Այժմ հայկական ներկայացում էր փախցնում Նիկոլան, ամէնին էլ նա ներկայ էր գտնվում կա'մ կուկիսների ետեւումը նըստած եւ կա'մ մի որ եւ իցէ դատարկ օթեակում: Գիմնապիայում նա հայերէնը չէր սովորել, բայց այդ չըջանի մէջ նա լաւ խօսիլ սովորեց:

Մի բան միայն նա չատ էր ցանկանում, այն է գրաւել մանկամարդ եւ սիրուն դէմքով Տ. Հըռիսիսիմէին, բայց վախնում էր նորա ամուսնից, իսկապէս ասած խայտառակութիւնից էր վախենում. հասել էր օրը, այն օրը, որոյ երեկոյեան տիկինը վերջապէս ընկճած խոտացել էր անձնատուր լինել, երբ Նիկոլան օր. վարդուհւոյն տեսաւ. մի վայրկեանի մէջ դարչելի դէմքերի փոխուեցան դերասանուհիների դէմքերը, նա զգուեց, իրեն կեղտոտ անուանեց, երբ օր. վարդուհւոյ սիրային տենդից չորացած շրթունքները դրոշմեցին նորա շրթունքների վրայ բանաստեղծական սիրոյ առաջին համբոյրը...:

—Նա սիրում եմ... մատծում էր հպարտութեամբ Նիկոլան, —նորա մի համբոյրը տուաւ այն բաւականութիւնը, ինչ որ չէին տուել դերասանուհիներին բազմաթիւ համբոյրները, Գ. Գուանքը եւ հեշտութիւնը...

Որովհետեւ նա համբուրում էր անարատ շրթունքներ:

Վ. ՓԱՓԱՋԱՆՅԱՆ
(Շաբաթական)

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ

ԿՐԱՆԴ ԶՕՐԱՊԵՏԻՆ ՄԱՀԸ

Նիւ — Երբ, օգոստ: 9,

Վեց ամսէ ի վեր ազգ. մ'ողջոյն, աւելի քան յիսուն միլիոն ժողովուրդ, արտառուալից աչօք կը հսկէր մեծանուն հիւանդին անկողնոյն քով անդոր օգնելու եւ ամէն վայրկեան սրտապալս սրտաթունտ դիտելով փոփոխութիւններն որ տեղի կ'ունենային անոր վիճակին մէջ: Հեռագիր, հեռաձայն, լրագիր, թղթատար եւ այլ ամենայն միջոց եւ գործի հաղորդակցութեան շարունակ կը տանէին Ամերիկայի ամէն կողմ եւ քաղաքակրթեալ աշխարհի այլ եւ այլ մասերը քաջ զօրականին վերջին սաստիկ կուռոյն մանրամասն լուրերը: Կրանդ զօրապետին հիւանդութիւնն, անոր վերաբերեալ դէպքեր եւ անցքեր իբր վեց ամիս ամէնօրեայ նիւթ էին Ամերիկայի մէջ լրագիրներու, հանդէսներու, ընկերական եւ ընտանեկան ակումբներու եւ ժողովրդեան ամէն կարգէ մարդոց մէջ քաջ լայն, քաջ երեւոյ սովորական բարեմալութիւնէն ետքը խօսակցութեանց յառաջաբան եւ վերջաբան էր Կրանդ: Երկարարատեւ հիւանդութիւնը կարծես թէ նուիրական ըրած էր ամէն բան որ կը վերաբերէր դիւցազնին անցելոյն եւ ներկային: Լրագրաց բանբերը, խմբագիրը եւ գրագէտը մանր մանր կրկնելով կը գտնէին եւ կը ժողովէին սրտաշարժ իրողութիւններ եւ դէպքեր որք ինչ եւ իցէ կերպով մօտէն կամ հեռուէն վերաբերութիւն ունէին քաջ զօրականին կենաց: Պատերազմի դաշտին բոլոր հին յիշատակները նորոգուեցան, եւ նիւթն անսպառ էր: Անոնք որ գիտեն թէ ինչ է ամերիկեան լրագրութիւնն, այնպէս կրնան փոքր ի շատէ դաղափար մը կազմել թէ վեց ամիսներու մէջ ինչ բաներ խօսուեցան եւ ինչ բաներ գրուեցան Ամերիկեան Միութեան ախոյանին վրայ: Եւրոպա ալ անտարբեր եւ անկարեկիր չմնաց դիւցազնին երկար վշտաց եւ ցաւոց, եւ բւերաւոր Ամերիկացւոց եւ Ամերիկեան այլեւայլ ընկերութեանց եւ մարմնոց հետ Եւրոպայէն եւս բազմաթիւ նշանաւոր անձինք, մեծ ընկերութիւնք, գիտական, բարեսիրական,

կրօնական եւ քաղաքական մարմինք, նոյն խակ թագակալ գլուխներ իրենց ցաւակցութիւններն, բարձր համարումն եւ առողջութեան համար ջերմ մտադրանքները փութացին յայտնել եւ հաղորդել մեծանուն հիւանդին եւ անոր ընտանեաց : Հազարաւոր եկեղեցիներու եւ աղօթից ժողովներու մէջ միլիոնաւոր բերաններէ եւ սիրտերէ ջերմ պաշտտանք եւ աղերս վերաբեցան վասն պահպանութեան կենաց անոր, որ երբ հարկ էր, չվարանեցաւ իւր կեանքը դնել պաշտպանելու համար դատ մը նուիրական եւ մեծ, եւ խղճելու համար հինգ միլիոն գերեաց շղթաները : Կրանդի պաշտպանած դատին մեծութիւնն եւ սրբութիւնը զԿրանդ ըրած է աշխարհի քաջ պատերազմողներուն մէջ անբիծ եւ ազնիւ : Բայց աւաղ, ախտն էր մահացու : Ճարտար բժիշկներ գիշեր ցերեկ հիւանդին ըովն էին տալու անոր ամէն գեղու դարման զոր արուեստ եւ գիտութիւն կրնան ընծայել : ախտը չէր դարմանուելու ախտ, եւ բժիշկները չկրցան պահ մը հեռացունել իրենց աշուրներուն առջեւէն ցուրտ իրականութիւնն : փափաքելով փափաքեցան խաբուիլ իրենց չարաշուք գուշակութեան մէջ, բայց չէին կրնար խաբուած ըլլալ : մանրացոյցն եւ ամէն քննութիւն կը հաստատէր բժշկաց արհաւիրք յայտնած կարծիքը : Կը մնար ուրեմն բըժըշկաց նուիրել իրենց բոլոր տաղանդն ու ճիշդ, մեղմելու ցաւերն մեծ զօրապետին որ իբրեւ մարտիրոս կը չարչարուէր, եւ երկարել, որչափ հնար էր, անոր պատուական կեանքը : Ամէն օր որ կ'անցնէր, քայլ մ'աւելի կը մօտեցնէր մեծ զօրապետը դերեզմանին : միւս կողմէն ամէն նոր օր կը համարուէր պատուական օր մը մահուան ձեռքէն կորզուած : Այսպէս մեծանուն հիւանդն եւ ճարտար բժիշկները կը կռուէին մահուան դէմ, եւ քանի մ'անգամ վանած էին անողորմելի թշնամին : Ապրիլի մէջ մեծ վախ կար որ զօրապետը եօթնեակ մը կամ երկու պիտի չապրէր : Մայիսի մէջ նոյնպէս վախ կար, եւ քանի մ'անգամ սիրելի լացին անոր մահն, եւ Նիւ-Երոք քաղաք գլորեցաւ անոր մահուան անհիմն լուրով : Հիւանդին վիճակն ըստ բաւականին բարւորած էր, եւ ամէն անգամ որ ցաւե-

րէն պարտալ դտնէր, ծերունի զօրականը կը դրէր իւր Անյնական Յիշատակարանները, զորս գրեթէ ամբողջացուցած է բարեբախտաբար :

Յունիս ամսոյ մէջ բժշկաց խորհրդով մեծանուն հիւանդը փոխադրուեցաւ Նիւ-Երոքէ 155-140 մըն հեռի Մաք Կրէկօր լեւան վրայ հովասուն ամարանոց մը զոր բարեկամ մը զրած էր զօրապետին եւ անոր ընտանեաց տրամադրութեան ներքեւ : Կը յուսացուէր որ ամարանոցի օդն եւ շրջակայ տեսարանները պիտի օգնէին հիւանդին, եւ ինքը Կրանդ զօրապետ խակ կը յուսար թէ մինչեւ աշուն կամ ձմրան սկիզբներն ապրելու կարող պիտի ըլլար : Յունիս 16 ին հիւանդն հանդերձ ընտանեօք եւ ընկերութեամբ իւր սիրելի բժշկաց մեկնեցաւ Նիւ-Երոքէ : հարկ չէ բացատրել թէ ճամբորդութիւնը դիւրին եւ անվնաս ընելու համար ինչ մեծ հոգ տարուեցաւ եւ օրպիտի հանձարեղ միջոցներ խորհուեցան եւ գործածուեցան : Զօրապետը Մաք Կրէկօր լեւան վրայ ամարանոցի զով օդին օդուտը վայելել սկսած էր : հեռագիրը կը տարածէին ուրախատիլ լուրեր : Յունիս 22 ին հիւանդին վիճակը դարձեալ ծանրացաւ, եւ նոր տաղնապ մ'եկաւ : սակայն այս տաղնապը մասնաւոր պատճառ մը չէր սովորականէն աւելի տաղնապեցնելու Ամերիկացիներն, զի անպարտելի զօրապետն անցուցած էր այնպիսի քանի մը տաղնապներ, եւ ամէն ոք ըստ փափաքանաց իւր սրտին կը յուսար եւ կը սիրէր հաւատալ որ ծերունի զօրապետն այս տաղնապն ալ պիտի անցունէր : Բայց այս վերջինն էր տաղնապ մահու : եւ վերջապէս քաջ զօրապետը գլուխը խոնարհեց յաղթող թշնամեայն առջեւ : Ահաւոր վախճանն, որոյ խորհուրդը սարսափ կ'ազդէր, հասաւ, դիւցազնին կենաց վերջին կայծը մարեցաւ, Կրանդ մեռաւ, մեծ դէմք մ'եւս անյայտացաւ չախարհէ, եւ Ամերիկեան ազատութեան բանթէոնին մէջ գիւցազնական ոգի մ'եւս դնաց մնալ : Զօրապետը մեռաւ, բայց անոր անունն է Ամերիկեան ազգին ժառանգութեան պատուական մէկ մասը, անոր ծառայութիւնքն առ հայրենիս եւ բարձրագոյն հայրենասիրութեան ներշնչութիւն, անոր վեհանձնութիւն ի ժա-

մու յաղթութեան է յիշատակ արժանի լաւագոյն աւուրց մեծ եւ ազատ ժողովրդեան մը :

Յուլիսի 23 ին առաւօտեան ժամն ութ կ'անցնէր ութ վայրկեան , երբ կենաց վերջին նշոյն չի՛լաւ : Զօրապետին սիրասուն ընտանիքն եւ բժիշկները պատած էին անկողնոյն շուրջը : Անակնկալ չէր մահն , բայց շանթի հարուածի մը պէս զարկաւ եւ սարսեց զամէնքը : Հիւանդութիւնն եղաւ երկար եւ դժնդակ , սակայն արի զօրապետը տարաւ ամէն ցաւոց մարտիրոսի մը դիցազնութեամբ եւ սրտի այն անխռովութեամբ որով նշանաւոր եղած էր Ամերիկայի քաղաքային պատերազմին մթագոյն օրերը :

Մահուան դոյժը կայծակի արագութեամբ տարածեցաւ ամէն կողմ , եւ ի խոր սուգ համակեց զերկիրն ողջոյն : Ամերիկայի վերջին քաղաքային պատերազմէն ի վեր թեւեւ ոչ մի դէպք , ի բաց առեալ նախագահ Կարֆիլտի մահն , այնչափ խորին կերպով յուզած էր Ամերիկեան ժողովուրդն որպէս յուզեց Կրանդ զօրապետին մահը : Ամէն կողմանէ սկսան երեւիլ ցաւակցութեան եւ ընդհանուր սգոյ նշաններ , երկիրն զգեցաւ սեւ , դադրեցան ուրախութեան հանդէսներ , արտասուօք լըցան աչուրներ , որ պահ մ'առաջ խնդութեամբ կը փայլէին :

Եկեղեցեաց զանգակներու տխրագին գանչիւնն , թնդանօթաց գոռումներ , կայմերու կէսէն սարգուած սգանիշ դրօշներ եւ Նիւ-Եորքի լրագրաց յաւելումները զօրապետին մահուանէն քիչ ետքը գուժեցին այս մեծ քաղաքին բոլոր բնակչաց մեծ կորուստը զոր ըրաւ ազգն յանձին այն մեծ մարդուն որ Վաշինկթոնէ եւ Լինքոլնէ ետքը փրկիչ եղաւ երկրին պահպանելով նահանգաց միութիւնն , եւ բառնալով գերութեան նախատիքը : Ինչպէս ըսուեցաւ , անակնկալ չէր մեծ զօրապետին մահն , բայց դոյժն ըրաւ աւելի խորին եւ մեծ ազդեցութիւն քան որ եւ իյէ անակնկալ աղետի լուր : Անմիջապէս փողոցներու մէկ ծայրէն միւսը շէնքերը ծածկուեցան դրօշներով , որոց շատերուն չորս կողմը սեւով պատած էր : Վաճառատուններու եւ ուրիշ շէնքերու , փոքր խանութներու եւ աղքատին տունե-

րու իսկ պատուհաններուն մէջ սկսան երեւիլ հանդուցեալ զօրապետին այլեւայլ ձեւով եւ մեծութեամբ պատկերներն , եւ կիսանդրիներն , սեւ չրջանակի մէջ առնուած կամ սեւ շղարշով ծածկուած : Շուտ ի վաճառ հանուեցան սեւ ժապուէններ եւ սրգոյ ուրիշ նշաններ որոց վրայ զօրապետ Կրանդի անունն , ծննդեան եւ մահուան թուականներն եւ ուրիշ խորհրդաւոր խօսքեր եւ նշաններ կային : Այս սգոյ նշաններու տեսակը՝ շատ եւ ձեւերը զանազան էին : Կրանդ զօրապետին տեսակ տեսակ պատկերներէն եւ կենսագրութիւններէն բւերաւոր օրինակներ վաճառուեցան սակաւ ժամանակի մէջ : Լրագրոց յաւելումներն իրարու կը յաջորդէին , եւ ամէն ոք անձկանօք կը սպասէր աւելի ընդարձակ տեղեկութիւն առնուլ դիւցազնին մահուան մանր պարագայներուն վրայ : Ամէն կողմէ կը լրանէր Կրանդ զօրապետի անունն , ամէն ոք բան մ'ունէր ըսելու կամ ընելու ի յիշատակ նախկին նախագահին եւ Միութեան ասոյն յանին :

Նիւ-Եորք սկսաւ սուգ հազնիլ , հասարակաց բոլոր շէնքեր , պանդոկներ , մեծ եւ փոքր վաճառատուններ , ընկերութեանց գրասենեակներ , անհատից ապարանքներ վայելչութեամբ եւ տեսակ տեսակ խորհրդանշաններով եւ գողտր նշանաբաններով սկսան ծածկուիլ : Այս մեծ քաղաքին սգոյ զարդարանքը չլնեցաւ մէկ կամ երկու աւուր մէջ . չաբաթ մ'ետքը դեռ կային շէնքեր որոց ճակտին վրայ մարդիկ կ'աշխատէին սգոյ նոր նշաններ դնելու , եւ առջի դրուածներն աւելի վայելուչ յարդարելու : Կըսուի թէ ասկէ առաջ Նիւ-Եորք երբէք այսպէս զգեցած չէր սգոյ նշանակներ : Մեծ շէնքերէն ոմանց զարդարանաց համար հազարաւոր կանգուն ալբաղա , կազմիր կամ սեւ չուխա եւ այլ նիւթեր գործուած են : Ամէն կողմ , ալ ու ձախ ամէն փողոցի վրայ , որչափ ալ փոքր եւ աննշան ըլլայ փողոցը , սեւ չրջանակի մէջ առնուած դրօշներ , սեւ շղարշով ծածկուած պատկերներ , սեւ եւ սպիտակ խառն դրասանգներ , ցաւոց եւ երախտագիտութեան յայտարար ուրիշ գողտր նշաններ կը զարնեն աչքի : Ի մի բան քաղաքին մէջ չկայ աղքատագոյն փողոց մը որ հատուցած չէ

իւր ցաւակցութեան հարկն : Եկեղեցիներէն ոմանք եւ Հրէից ժողովրդանոցներ գեղեցկապէս զարդարուած են : Խեղճ այրի մը սապէս յայտնած էր իւր յարգանքն առ զօրապետն , որոյ հրամանին տակ ծառայած էր իւր ամուսինն : Խեղճ այրին իւր ամուսնոյն յուղարկաւորութեան ատեն գործածած էր մէկ մասն իւր հարսնութեան ոսկէ կրօն շրջագլխաւորն , մնացեալ մասն ալ կըրանդ զօրապետին ի պատիւ կը գործածէ իւր բնական տան ճակատը զարդարելու : Այսպիսի սրտաշարժ դէպքեր շատ են : Կօշիկ ներկող սեւամորթ մը , որ խղիկ մ'ունի զինքն անձրեւէ եւ արեւէ պահպանելու համար , սակաւ դրամով զոր կրցած էր ձեռք բերել , գնած է սեւ կտաւ իւր հիւղին ճակատը զարդարելու , եւ տակը դրած է խոշոր գրերով . « Նա օգնեց ընէլ շէն աշար » : Դժուար է մի ըստ միովէ բացատրել թէ սեւամորթներն ինչպիսի սրտաշարժ ցոյցերով յայտնած են իրենց խորին ցաւն իրենց ազատարարին մահուան համար : Հազարաւոր աղքատ աղջիկներ , պատանիներ , գործաւորներ եւ գրագիրներ իրենց անբաւական շարժականէն մաս մը խնայած են , եւ անով կամ զօրապետին պատկերը , կամ դրօշ , կամ սեւ կերպաս գնած եւ պարծանօք դրած են իրենց վարձու սենեակներու պատուհաններուն առջեւ , կամ դարակներու վրայ : Ի հակիրճ բան սուգն ընդհանուր է Նիւ-Եորքի եւ Պրուքլինի մէջ եւ ինչպէս կը հասկցուի լրագրաց մէջ հրատարակուած հեռագրական լուրերէ եւ ուրիշ տեղեկութիւններէ , նոյն խոյն հարաւային նահանգներու մէջ , դիւցազնին յիշատակին մեծ յարգանք մատուցանելու բուռն փափաքը կը դրդէ միլիոնաւոր մարդիկ այս ընդարձակ երկրին մէկ ծայրէն միւսն մինչեւ ցարդ նմանը չտեսնուած ցոյցեր ընելու :

Նիւ-Եորքի եւ Պրուքլինի շէնքերէն ոմանց ճակատը սոյն նշաններու մէջտեղ եւ հանգուցեալ զօրապետին խոշոր պատկերներու տակ գրուած գողտր խօսքերէն ոմանց թարգմանութիւնն են հետեւեալք .

Կ'ողբանք մեր կորուստն :

Աղբը կ'ողբայ իւր մեծ կորուստը : Փրկիչ հայրենեաց , մահը միայն կրցաւ յաղթել անոր :

Միութիւնը կ'ողբայ վասն կորստեան նորա որոյ հզօր բաղակը պահպանեց զայն :

Նորա անունն եւ համբաւն պիտի մնան յաւիտեան : Կը գովենք զնա իբրեւ զօրական , Կը պատուենք զնա իբրեւ մարդ : Մեռեալ բայց դեռ կ'ապրի մեր սիրտերուն մէջ : Մենէ մեկնած է , բայց չէ մոռցուած : Մեծագոյն պատերազմողն իւր դարուն :

Ճարտնայիներու ընկերութեան մը մեծ վաճառատան երեսն ամբողջովին ծածկուած է վերուստ ի վեր ընտիր սեւ կերպասով , միայն պատուհանները բաց մնացած են , եւ ճակատին ճիւղ մէջտեղ դրուած է հանգուցեալ զօրապետին մէկ մեծ պատկերն որոյ ներքեւը գրուած է խոշոր տառերով « ՄԵՐ ԵՐԿՐԻՆ ԲԱՐԵԿԱՄԸ » :

Կերպասէ եւ այլեւայլ նիւթերէ բանաստեղծական եւ այլաբանական նշաններ պատրաստուած են այնպիսի ճաշակաւ եւ արուեստիւ որ արդարեւ յարտասուս կը փոփոխեցունեն զմարդ : Պրուքլինի մէջ հարուստ վաճառատան մը ընդարձակ պատուհանները կը գրաւեն ընդհանուր ուշադրութիւն : Պատուհաններուն ետին եւ քովերը ծածկուած են թանկագին սեւ կերպասով եւ աստեղիկով որոյ վրայ գեղեցիկ կարգով շարուած են արծաթեղէն աստղեր : Գլխաւոր պատուհանին կեդրոնը կը կենայ դադաղ մը ծածկոցով որոյ վրայ դրօշ մը նետուած է : Դադաղին վրայ կ'երեւի սուր մը շղարչեայ հանգոյցներով զարդարուած : Ասոր վրայ կայ հանգուցեալ զիւրցազնին պատկերն , եւ պատկերին վրայ արուեստ կիսանդրին : Դադաղին երկու կողմն եւ առջեւ յատուկ ամաններու վրայ դրուած են ցորենի հասկեր փունջ կապուած : Անմիջապէս ետին կան երկու սիւններ , որոց վրայ դրուած են սեւ եւ սպիտակ ժապաւէններով իրարու փառուած փաթթուած պսակներ : Այս ամենուն վրայ կը սաւառնի խումբ մը քերովբէից ունեւով իրենց ձեռաց մէջ ծաղկանց փունջեր : Չեմ կրնար թարգմանել հարկւրաւոր ոտանաւորներ եւ ուրիշ սրտառուչ խօսքեր զորս երկու կողմն կը տեսնեմ , երբ կ'ելեմ պատիւ Նիւ-Եորքի եւ Պրուքլինի լայն եւ մըրոններով երկայն փողոցները : Փողոցի կառքերն եւ ձիերը սեւով պատուած դրօշներ կը կրեն , եւ փողոցներու եւ անկիւններու գլուխը միգեղէն եւ այլն վաճառողներու « երկները սեւի մէջ առնուած են :

Զօրապետին մահուանէն իբր երկու ժամ ետքը նախագահ Գլխիկէնտ հետեւեալ հեռագիրն ուղղեց Տիկին Կրանդի .

«Ընդունեցէ՛ք զհաւաստիս սրտագին համակրութեանս ի ժամու ձեր մեծ տառապանաց : Համայն աղլը կ'ողբայ ձեզ հետ , է , եթէ կարենար , սիրալի մխիթարութեամբ պիտի հասնէր ի խորս ցաւոց որ ձերն են միայն , եւ զորս Աստուծոյ գթութիւնը միայն կրնայ բուժել :»

Նոյն ատեն նախագահն ազդու յայտարարութեամբ ծանոյց ազգին պաշտօնապէս զմահ մեծ զօրապետին , գովելով անոր առաքինութիւններն եւ մեծ ծառայութիւնները : Հրաման ըրաւ որ կեղծոնական կառավարութեան բոլոր պաշտօնարանները սգոյ նշաններով զարդարուն երեսուն օր ի նշան յարգանաց մեծ զօրապետին յիշատակին , եւ յուղարկաւորութեան օրը հասարակաց բոլոր գործերը դադարին :

Պատերազմական եւ ծովային դործոց նախարարը հարկաւոր հրահանգներ տուին պարտաւատաճ զինուորական եւ ծովային պատիւներն ընելու յուղարկաւորութեան օրը :

Բոլոր նահանգաց կուսակալները նոյնպէս պաշտօնական յայտարարութիւններ հրատարակեցին հրաւիրելով ժողովուրդն ընել ընդհանուր սուգ եւ մատուցանել յարգանաց հարկ անոր որ երկիցս նախագահ , միութեան պաշտպան եւ Ամերիկեան զօրաց յաղթող առաջնորդ եղած էր : Նիւ-Եորք նահանգին կուսակալը մասնաւոր կերպով յիշեց իւր յայտարարութեան մէջ որ յուղարկաւորութեան օրը պահուի իբրեւ ազգային տօնի օր :

Նոյն օր սկսան տշխարհի չորս կողմէն տեղալ ցաւակցութեան հեռագրեր առ տիկին Կրանդ եւ որդիս նորա : Մաք Կրէկօր լեռն եղաւ ուխտատեղի եւ շատ պատուաւոր մարդիկ Սարադօկայէն եւ ուրիշ մերձաւոր տեղերէ դիմեցին այն ամառանոցն ուր իւր վերջին շունչն աւանդեց մեծ զօրապետը :

Նիւ-Եորքի քաղաքապետն ի դիմաց քաղաքապետական ժողովոյ ցաւակցութեան հեռագիր զարնելով հանդուցեալ դիւցաղնին ընտանեաց , պաշտօնապէս ծանոյց թէ մեծ քաղաքը պատրաստ էր իւր հասարա-

կաց պորտէզներէն մէկուն մէջ հանդրստեան վեջին տեղի նուիրել Կրանդ զօրապետին նշխարաց :

ԵԱՆՔԻՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Մ Ա Ր Ի Ս

Կանաչ անտառում անոյշ բուրմունքով

Ծաղկը գարնան երբ փթըթումէ ,

Համեստ զեփուռին սիրոյ հրապոյրբով ,

Նա մի ժպիտ է ծածուկ արձակում :

Եւ մատաղ ոսար քնքոյշ շարժումաճքով ,

Ուրախ ու զուարթ ողջոյն է կարդում ,

Գոռոզ ծաղկի դէմ գլուխ թեքելով ,

Խորին յարգանքը յայտնել աշխատում :

Այսպէս եւ Մարիան գողտրեկ դայլայով ,

Գրաւիչ աչքը դէպ երկինք յառած

Սէր է թոթովում քնքոյշիկ բերնով .

Եւ այդ ներդաշնակ , անոյշ հրապոյրբում

Հոգին , յարգելով երկնային տուրքը

Դէպ ազատ եթերը սաւառնել ձգտում :

Լօղան :

ԱԼՖՐԷՏ ՏԸ ՄԻԻՍԷ

Թարգ . 204

ԶԱՆԱԶԱՆՔ

ԲԵԴՐՍՊՈՒՐԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԲԱՆՏԸ

Բեդրսպուրկի քաղաքային բանտը կը գտնուի Վիպուրկ թաղին մէջ եւ կը տարածուի մինչեւ Նէվա : Պատուհաններն զինեալ են հաստ ձողերով եւ երկաթեայ վանդակով : Դուրսը , մէն մի պատուհանի ստորին մասը ծածկուած է երկաթեայ տախտակով մը , այնպէս որ բանտարկեալը երկինքը միայն կը տեսնէ , առանց գիտնալու թէ ինչ կը պատահի փողոցին մէջ :

Երկաթեայ երկրորդ դուռն անցնելէ յետոյ , ուր պահակ մը կը հսկէ , նոյն իսկ բանտը կը մտնես , որ կը բաղկանայ երկ-յարկանի գլխաւոր բնակարանէն եւ ուրիշ քանի մը յարակից մասերէ , որը կը պարունակեն արհեստանոցները եւ ճեմիչները : Շէնքը կառուցուած է Աննա Իվանովնա

կայսրուհւոյն օրով, եւ այդ ժամանակ կը ծառայէր իբր մթերանոց Պետութեան գինիներուն. 1869ին, բանտի վերածեցաւ հարկ եղած նորոգութեամբք:

Հասնելով ստորին յարկը, կը տեսնես նախ երկաթեայ սրահներու երկար շար մը, որոց ձողերուն ետեւ կը տեսնուին բանտարկելոց դռնատու ու լռին դէմքերը: Վերին յարկը գրեթէ մի եւ նոյն է. սրահներու շար մը՝ երկար ու նեղ նրբանցքներով: Մէն մի յարկ կը պարունակէ 11 սրահ, որոց իւրաքանչիւրը կը պարունակէ 22 բանտարկեալ: Իրարմէ բաժնուած են հաստաբետա միջնորմներով: Սրահներուն վերեւ կախուած են սեւ տախտակիկներ որք ցոյց կուտան թէ բանտարկեալը քանի՜ անգամ բանտէն անցած է. անոնք որ առաջին անգամ կը գտնուին անդ, խմբովին բաժնուած կ'ապրին մէկէ աւելի բանտարկութիւն կրող անձերէն:

Բանտին կանոնադրութեան համաձայն բանտարկեալը օրը 10 կուպէկ կ'ստանան իւրենց սննդեան համար: Աերակուրն է երկու լիւրա սեւ հաց, քառորդ լիւրա միս եւ բաջարեղէնով ապուր մը: Բայց դրովհետեւ պահք կը բռնեն ոչ միայն Մեծ Պահոց օրերն, այլ եւ ամեն չորեքշաբթի եւ ուրբաթ, —մէն մի բանտարկեալի ամեն շաբթու կ'իյնայ 1 1/2 լիւրա միս: Ընթրիքին ապուրին կը խառնեն նաեւ կալամը եւ ալիւր, իսկ ճաշին՝ մի միայն ապուր: Բանտարկեալը իրենցմէ մին կ'ընտրեն պահպանելու համար իրենց շահերը բանտին խոհանոցին մէջ: Նա է որ կ'ընդունի նպարեղէնները եւ կը հսկէ կերակրոց պատրաստութեան:

Աշխատութեան դրութիւն մը կադմակերպուած է բանտին մէջ եւ նպատակ ունի բանտարկեալները վարժեցնել ժրջան կեանքի մը եւ գերծ պահել զանոնք անգործութենէ եւ իւր չարաշուք հետեւեալներէն: Բանտին մէջ ժամերն հետեւեալ կերպիւ բաժնուած են. ժամ 5 էն 6, բանտարկեալը կը զարթնուն ի ձայն զանգակի մը եւ թէյ կը խմեն, զոր իրենք՝ պարտին գնել. 6 էն 11, կ'աշխատին արհեստանոցին մէջ. 11 էն 1, ճաշ եւ ստոյտ, ապա, վերաւին աշխատութիւն մինչեւ ժամ 4. 4 էն 5, բանտարկեալը նորոն թէյ կը խմեն

եւ կ'աշխատին մինչեւ 7, կ'ընթրեն եւ կը պառկին ժամ 9 ին: Այս ծրագրին համեմատ, բանտարկեալը օրը 10 ժամ կ'աշխատին:

Բռնի աշխատութեանց մէջ է բանտին պիտոյից հարկ եղած Նէվայի ջուրը տալ ջրհանով: Օրն 80 մարդ կ'աշխատին առ այս ջորս առ ջորս գործելով: Մէն մի բանտարկեալ ջրհանը կը քաշէ տասն վայրկենի չափ. այս թնդերային աշխատութեամբ օրը 18000 ֆարօ (դոյլ) ջուր կ'ստացուի:

Արհեստանոցը բաժնուած է ատաղձագործի, կօշկակարի, յարդի աթոռներու նորոգչի եւ սենեակներու: Ատաղձագործութեան արհեստանոցին մէջ կը շինուին ամեն տեսակ կարասիներ. այսպէս, այս ամառ, մայրաքաղաքին պարրական դպրոցներն 600 սեղան ապսպրած են աշակերտաց համար: Կօշկակարաց արհեստանոցին մէջ ո'չ միայն բանտարկելոց, այլ եւ օտարաց համար կօշիկներ կը շինուին: Բանտին մթերանոցը միշտ ի պահեստի ունի 1500 զոյգ կօշիկ: Ապսպրուած մէն մի զոյգի համար բանտարկեալը կ'ստանայ 30 կուպէկ. կրնայ օրը մինչեւ երկու հատ շինել: Վիէնայի աթոռներու շինութեան արհեստանոցը տարին 3000 բուբլիով վարձուած է Պէհրադրամ գործարանէն:

Ուրիշ ճիւղի մը մէջ, գլանիկի զանազան մեծութեամբ տուփեր կը փակցուին: Միակ մարդ մը կրնայ օրը 2000 տուփ փակցնել. հազար տուփի համար կ'ստանայ 40 կուպէկ:

Ամենէն նուազ չափերը աշխատութիւնն է հին չուաններէ թելեր հանել. դժուար է օրն 5 լիւրայէ աւելի կանելի հանել, եւ մէկ բուտը (15 1/3 օխա) 40 կուպէկ կը վճարուի: Բաց աստի, բանտարկեալը կ'ըրազին փայտի փոխադրութեամբ եւ 30 կուպէկ կը շահին օրը. բանտին ներքին պիտոյից աշխատութիւնը ճրիարար կը կատարուին:

Բանտն ունի իւր յատուկ բանջարանոցը, զոր կը մշակեն 12 բանտարկեալք: Կաթովիկ գերեզմանատան մօտ, այս բանջարանոցը կը դրաւէ 6000 քառակուսի «սէն» (երեք կանգուն): Այնքան կալամբ կ'արտադրէ որ մէկ մասը կը ծախուի: Այս կերպիւ ստացուած շահը տարին 1200 բուբլի կը հասնի:

Օրէնքը կը սլահանջէ որ բանտարկելոց վաստկած ստակին կէսը Պետութեան անց-

նի : Մնացեալ կէսն իրենց կը թողուի , այլ ամբողջ ստակն իրենց ձեռքը չյանձնուիր . 50 % կը պահուի վարչութեան ըով մինչեւ բանտարկութեան պայմանաժամուն լրման օրը : Այս կերպիւ , չահուած ստակին քառորդին չնորհիւ՝ զոր կ'ստանայ բանտէն ելած ժամանակ , բանտարկեալն ապրելու միջոց ունի մինչեւ որ տեղ մը գտնէ : Բնակութիւնն , հանդերձը եւ սնունդը ձրի լինելով , բանտարկելոց զուտ չափը ամիսը 15 էն 50 բուբլի կրնայ լինիլ :

1884 ին , աշխատութեան այս գրութեամբ՝ այս բանտին կեդրոնական վարչութիւնը կրցած է 55,000 բուբլի դնել մէկ կողմ , որը աճեցուցած են բանտերու կեդրոնական վարչութեան տնտեսական գրամագլուխը : Աշխատիլ չուող բանտարկեալը մի միայն հաց եւ ջուր կ'ստանայ : Սովորաբար , երկու երեք օր վերջ կը հպատակի : Կարգապահութեան դէմ'ն եւ է մեղանշում կը պատժուի զնդանով , որ լուսաւորեալ կամ խաւարտչին է , ըստ յանցաւորութեան աստիճանին : Բանտարկեալը մի միայն հաց եւ ջուր կ'ստանայ անդ , երկու կամ երեք օրը անդամ մ'ալ կ'անոնաւոր ճաշ . բանտապետն իրաւունք ունի առաւուսէն մէկ շաբաթ զնդանի դատապարտել . կեդրոնական վարչութեան պետը կրնայ մինչեւ երկու շաբաթ զնդանի պատիժը տալ յանցապարտներուն :

Բանտին հիւանդանոցը կրնայ պարունակել 200 հիւանդ : Շիւանդաց մեծ մասը ընդադարութեամբ կը տառապին :

Արհեստանոցի աշխատութիւններէն զատ , բանտարկեալը կրնան դպրոց յաճախել : Մեծ սենեակ մ'է այս որ կրնայ սարունակել յիսունի չափ մարդ : Բեմը , սեղանները , նստարանները , դրատախտակը , ամէն ինչ սեւ է : Պատերը զարդարուած են պատկերներով որք Ս . Վրքէն տեսարաններ կը ներկայացնեն : Զմրան երկար երեկոյներն աւելի կարճ կը թուին բանտարկելոց , մոգական լապտերին չնորհիւ : Դասերը կը տրուին առաւօտեան ժամ 8 էն մինչեւ 11 :

Հաշտարար դատաւորաց վճռով դատապարտեալը միայն կ'ընդունուին այս բանտին մէջ , եւ վեց ամիսը շանցնող պայմանաժամաւ , այնպէս որ տարուան մը ընթացքին մէջ բանտարկեալը երկու անգամ

կը նորոգին : Երբ նոր մը կը բերուի , իւր անունը կ'արձանագրուի , իւր հագուստները կը պահուին մինչեւ ելնելու օրը . իրենց հանդերձին՝ տեղ , բանտարկելոց կը տրուի , ձմեռը՝ դորչ ասուէ վերարկու մը եւ տաքատ մը , եւ ամառը՝ կտաւէ :

Ամիսն երկու անգամ բանտարկեալը արտօնեալ են ընդունելու իրենց ծնողաց կամ ծանօթներու այցելութիւնը , եւ այս առթիւ մասնաւոր տոմսեր կ'ստանան : Տեսակցութեան միջոցին , բանտարկեալը տաս հոգւոյ խումբեր կ'ազմած կը տարուին առանձին սենեակ մը որոյ միակ պատուհանէ կը նայի նրբանցքին վրայ , ուր կը կենան այցելուք : Բանտարկեալը մէկ կողմէն եւ այցելուք միւս կողմէն կը խօսակցին միմեանց հետ ձողերուն մէջտեղէն , առանց այսպէս կարենալու սեղմել գէթ իրարու ձեռքերն , որպէս կը լինի ուրիշ բաններու մէջ :

Ք Ա Ղ Ո Ի Ա Մ

ՅԱԲԱԹԱԿԱՆ ԱՐՈՅ

17-26 ՕԳՈՍՏՈՍ

Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Ռուսիոյ և Աւստրիոյ կայսերք օգոստոս 13|25ին տեսակցեցան ի Քրէմլէր : Այս տեսակցութիւն յոյժ մտերմական եղաւ . հանդէսներ , լուսավառութիւնք , թատերական ներկայացումներ տեղի ունեցան և սեղաններ տրուեցան : Երկու վեհապետք որսի գնացին բաց կառօք և համակրալից ողջունուեցան ժողովուրդէն : Պ . Կիրս և Քալնոքի կոմսը չ'մասնակցեցան իրենց վեհապետաց որսական և այլ հաճոյից , այլ ընկերակցութեամբ Վիէննայի ռուսական դեսպան Լապանով իշխանին և Բեդրսպուրկի աւստրիական դեսպան Վոյքէնչիատ կոմսին , քաղական լուրջ խորհրդակցութեամբք զբաղեցան :

Աւստրիոյ և Ռուսիոյ նախարարապետք թղթակիցներ ընդունելով , յայտարարած են անոնց թէ տեսակցութեան միակ նպատակը խաղաղութիւնն ամրապնդել պիտի լինէր :

Հունգարիոյ և Կալիչիոյ լրագիրք ցուրտ ընդունելութիւն ըրին կայսերական տեսակցութեան, առաջինք յիշելով այն չարիք զորս Ռուսիա հասուցած է երբեմն Մաճանեւրուն, և Աւստրիոյ Բոլոնացիք յիշելով թէ Ռուսիոյ Բոլոնացեոց հողատիրութիւնն արագիւղ օրէնքն հրատարակեցաւ անցեալ տարւոյ Աքերնեւիճէի կայսերական տեսակցութենէն յետոյ: Վիէնայի գերմանական ազատական լրագրերն ալ հաղորդ չ'եղան կէս-պաշտօնական մամուլն Ռուսիոյ նկատմամբ քաղաքավարական հրատարակութեանց: Բայց ամեն տեսակ լրագիրք կը միաբանին ճանչելու թէ այս տեսակցութիւն քաղաքական տեսութեամբ ապարդիւն չ'ալիտի լինի բոլորովին:

— Պերլինի Նախնաւ Զայնիլ լրագիրք կը հաստատէ թէ Վիքթորիա թագուհւոյն այնդունմն իւր բացման ճառին մէջ, թէ Վեհ. Սուլթանին գերիշխանութիւնը ճանչցուի Եգիպտոսի վրայ, կը նշանակէ թէ ապագային մէջ Եգիպտոսի հսկողութիւնը պիտի լինի առաւելապէս Սուլթանին քան խմբիլին հովանաւորութեան ներքեւ:

— Սպանիական կառավարութիւնը նոր ծանուցագիր մ'ստացաւ Գերմանիայէն որ կը հերքէ Սպանիոյ իրաւունքները Կարոլեան կղզեաց վրայ: Այդ ծանուցագիր բարեկամական ոճով գրուած է:

Հակադերման ցոյցերը կը շարունակեն բովանդակ Սպանիոյ մէջ. հանգանակութիւնը բացուած են մարտանաւեր գնելու համար:

— Նոյն Վեհ. կը ծանուցանէ թէ պետական շրջանակներու մէջ գիտաւորութիւն կայ. արտասահմանեան անցադիրներու տուրքն աւելցնել:

— Կար. լրագիրք կըսէ թէ Կարնոյ ուսական հիւպատոս զօրավար Տէնէթ խընդրած է տեղւոյն կուսակալէն որպէս զի ուսական սահմանի վրայ արշաւող թուրք աւազակներու ասպատակութեանց առնաքն առնուի, քանի որ անախորժ հետեւանքներ կրնան ծագիլ:

— Աֆղանեան սահմանադրութիւն առնուած լուրեր կը ծանուցանեն թէ սահմանադրւոյ գծման անգլիական յանձնախմբին անդամք այս պահուս զայրացած են ընդդէմ Հէրազի կառավարութեան, որովհետեւ այս վեր-

ջինը բռնաբարած է իրենց նամակաց դադունիքը և անկիրթ կերպով վարուած է իրենց հետ: Այս առթիւ բողոք բարձուած է Աֆղանստանի Էմիրին:

— Հնտաստը թեթեւադէս կը նուազի յՍպանիա և Ֆրանսոյի հարաւակողմը:

— Պուլլարիոյ Ալեքսանդր Իշխանը գնաց Բիլսէն, ներկայ գտնուելու աւստրիական բանակին տարեկան մարզահանդէսներուն: Հոն հասած է նաև Ֆրանս. Լոդէֆ Կայսրը:

— Ալեքսանդրիոյ հատուցմանց վճարուելուն համար օտար գաղթականութեանց պատգամաւորութիւն մը շնորհակալեաց ուղերձ մը ներկայեց խմբիլին:

— Թայֆ կ'ըսէ թէ Պ. Կիրս խոստում ըստացած է թէ Աւստրիա պիտի երաշխաւորէ Թուրքիոյ չէզոքութիւնն, անգլո-ուս պատերազմի մը մէջ:

— Զանգիպարի Սուլթանին քրիստոնէութիւն ընդունած քոյրն և իւր որդիք, որք Պերլին կը բնակէին երկար ժամանակէ հետէ, օգոստ. 28ին հասան Զանգիպար, գերմանական հովանաւորութեան հաստատման վրայ: Գերմանացի ծովակալը իշխանուհւոյն դրաւեալ ստացուածոց յանձնումը կը պահանջէ Սուլթանէն:

— Լուր կայ թէ Հապէշաց Յովհան Թագաւորին վրայ թեթեւ տեսակէն խեղադարուութիւն մ'եկեր է, և թէ Հապէշ ժողովուրդը նախամեծար կը համարի Տէրութեան խնամակալ ընդունել հապէշ բանակին սպարապետն՝ զՌաս Ալուլա, քան զԹէոտոր իշխան, որդի Հապէշաց հանգուցեալ թագաւորին:

— Ռիկայի և Ռէվալի (Ռուսիոյ Պալթիկեան նահանգք) քաղաքապետք Զարին հրամանաւ պաշտօնանկ եղան, որովհետեւ չէին ուզած ուս լեզուն գործածել իրրեւ պաշտօնական լեզու իրենց պաշտօնին վերաբերեալ գործոց մէջ:

— Բեզրասպուրկի օսմ. դեսպանն երկամասայ արձակուրդ մը խնդրած լինելով, կ'ըսէ Տէյլէ Նեւի թղթակիցն, հրաման եղած է իրեն մնալ ի Ռուսիա, ուր իւր ներկայութիւն այս միջոցիս հարկաւոր է: Կ'ենթադրուի թէ այս հրաման վերաբերութիւն ունի Սըր Տ. Ռուլֆի պաշտաման հաւանա-

— Մոսկովիս վերստին կը ծանուցանէ թէ

ուսն Սինոդը, նկատելով որ Օրթոդոքսութիւնը նիւթական միջոցներու ազքատութեան պատճառաւ շատ թոյլ յառաջդիմութիւն կ'ընէ ի կաւկասիա, դիմած է Ռուսիոյ երկտական նախարարութեան, առաջարկելով որ մեծ դումար մը յանձնուի կաւկասիոյ մէջ Օրթոդոքս քրիստոնէութիւնը վերանայնալու համար աշխատող ընկերութեան:

Ն Ե Ր Ք Ի Ն

Իզմիրի կուսակալ Նաչիտ փաշա Սուրբիոյ կուսակալ անուանեցաւ հանդուցեալ Համոյի փաշայի տեղ:

Սելանիկի կուսակալ Հազգը փաշա Իզմիրի կուսակալ անուանեցաւ և Վանայ Նախորդ կուսակալ Հասան փաշա՝ Սելանիկի կուսակալ:

— Անգլիական արտասովոր պատուիրակ Սըր Տրըմընտ Ուոլֆ չաթմուս սկիզբը պատիւ ունեցաւ Վեհ. Սուլթանին ներկայանալու և իւր պաշտօնագրերը մատուցելու: Սուլթանն յոյժ համակրալից ընդունելութիւն ըրաւ Սըր Ուոլֆի և յաջորդ օրը կայս. պալատ հրաւիրելով զնա, մասնաւոր ունկընդրութիւն մը շնորհեց որ տեւեց քանի մը ժամ:

Զօրեքչաթի իրիկուն կայսերական հրամանագիր մ'եւաւ որ Սըր Ուոլֆի հետ Եգիպտական խնդրոյն վրայ բանակցելու պաշտօնը կը յանձնէ արտաքին գործոց նախարար Ասիւֆ փաշայի և Էֆգաֆի նախարար Քեամիլ փաշայի:

Բանակցութիւնը սկսան յաջորդ օրն իսկ, ի Բ. Դուռն:

— Վեհ. Սուլթանի դահակալութեան Թ. Տարեդարձն արտասովոր չքով կատարուեցաւ այս տարի թէ՛ մայրաքաղաքիս մէջ և թէ՛ ի դաւառս: Ներկալարթի օրը գոց էին բոլոր կառավարական պաշտօնատուներ և գիւշերը լուսավառութիւնք եղան ամեն կողմ:

— Պուլլարիոյ իշխանին եղբայր՝ Ֆրանսուա Ժօզէֆ Իշխանը մայրաքաղաքս եկաւ:

— Օսմ. հանրային պարտուց վարչութեան կողմէ վերջերս պատրաստուած տարեկան հաշուեկշիռը ցոյց կուտայ թէ անցեալ 1500 տարւոյ հասոյթը նախորդ տա-

րիներէ 87000 ոսկի աւելի եղած է: Սոյն գումարէն 61,000 ոսկի վճարուած է ի հաշիւ Բէճիի, իսկ մնացեալ 26000 ոսկին տոմարաց մէջ արձանագրուած է իբր զուտ հասոյթ:

— Եւրոպական Թուրքիոյ երկաթուղեաց միացման ընկերութիւնը Բ. Դրնէն արտօնութիւն խնդրեր է երկաշաղիներ զրկել ի Փորը Ասիա, երկաթուղոյ մը հաստատման համար ուսումնասիրութիւններ ընելու:

Սնդիրն յանձնուած է հանրագումար շինութեանց նախարարութեան:

— Մայրաքաղաքիս Առողջապահական Խորհրդոյ օրոշմամբ, Վառնայէն ուղեւորներով եկող շոգեհաւք չորս օրուան քարանթինայի պիտի ենթարկին ի Քավաք: Իսկ Բէօսթէնէն, Դանուբի նաւահանգիստներէն և Օտեսայէն ուղեւորներով եկող նաւերն երեք օրուան քարանթինայի պիտի ենթարկին ի Քավաք: Նոյնպէս՝ օգոստ. 27 էն սկսեալ իտալիոյ ո՛ր եւ է նաւահանգիստէ մեկնող նաւերը կ'ենթարկին քարանթինայի այն կանոնաց որք հաստատեալ են սպանիական և ֆրանսական նաւահանգիստներէ եկող նաւոց համար: Ճենովայէն եկող նաւոց համար հաստատեալ քարանթինան կը հաշուի օգոստ. 20 ին մեկնող նաւոց համար: Նոյնպէս սեպտեմբեր մէկէն յետոյ Քորսիքայէն, Թունուզէն և Ալճէրիայէն մեկնող նաւերը քարանթինայի կ'ենթարկին:

— Սերաստիոյ պաշտօնական թերթն հետեւեալ տեղեկութիւնները կուտայ Ամասիոյ վերջին հրդեհին վրայ:

Հրդեհը ծագեր է Սաման-Բաղար թաղը փուռէ մը և չորս զանազան ուղղութեամբ ճարակեր է, հակառակ եղած ամեն ջանից: Հրդեհը տեւեր է տասն ժամ և մոխիր դարձուցեր է 520 խանութ, 7 խան, 5 մզկիթ և մեր ազգային վարժարանն ու վանքն:

Եղած նիւթական փաստը կը հաշուի 8,370,000 զրուշ: Մարդու կորուստ չկայ:

Ա Չ Դ Ա Յ Ի Ն

—o—

Վեհ. Սուլթանի Գահալալութեան տա-
րեգարձին օրն, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը
Կայս. պալատ երթալով պատիւ ունեցաւ
Ն. Կ. Վեհափառութեան ներկայանալու,
եւ շնորհաւորական ուղերձ մը մատոյց:
Սուլթանն յոյժ համակիր ընդունելութիւն
ըրաւ Ամեն. Ս. Պատրիարքին:

Հռոմէական Հայոց Պատրիարք Գերեթ. Ա.-
զարեան Սրբազան ևս նոյն օր պատիւ ունե-
ցաւ Ն. Կ. Վեհափառութեան ներկայանալու:

—Ասորւոյ Ս. Կաթողիկոսը տեղական
գործոց նկատմամբ մի քանի հեռագրեր
ուղղած եւ Ս. Պատրիարք Հայրն այս մա-
սին Բ. Դրան հետ բանակցած լինելով, Գա-
ղաթական Ժողովն իւր վերջին նստին մէջ
տեղեկացաւ բանակցութեանց արդեան եւ
որոշեց ըստ այնմ պատասխանել Ասորւոյ Կա-
թողիկոսին եւ ապահովել զինքն թէ տեղի
ունեցած դանդաղութիւնն ուղղութեան առ-
նուած են Կայս. կառավարութեան կողմէ:

—Երուսաղէմայ Պարտուց բարձման
նախորդ յանձնաժողովն չաբթուս մէջ եր-
կու անգամ խառն նիստ ընելով Ազգ. Ժո-
ղովէն ընտրեալ խորհրդարանական նոր
յանձնաժողովոյ հետ, այս վերջնոյն յանձ-
նեց իւր արամադրութեան ներքեւ գըտ-
նուող բոլոր տուեմաններն ու գոյքերը: Հե-
տեւաբար նոր յանձնաժողովը գործի կը
ձեռնարկէ անյապալ:

—Ամեն Մակար Սրբազանի կաթողիկո-
սական հաստատութեան դէմ Զմիւռնիոյ
Գաւառական Ընդհ. Ժողովոյ կողմէ բողո-
քոյ հեռագիր մ'ուղղուած լինելով Ս. Պատ-
րիարք Հօր, Քաղ. Ժողովն նկատողութեան
առաւ զայն, բայց որովհետեւ կաթողիկո-
սական ընտրութեան արդիւնքը տակաւին
պաշտօնապէս հաղորդուած չէր Ազգ. Պատ-
րիարքին եւ խնդրոյն նկատառումն կը վե-
րաբերէր նախ եւ առաջ խառն Ժողովոյ,
Ժողովն որոշեց վերապահել խնդիրը խառն
Ժողովոյ նկատառումն:

—Կը յիշուի թէ իբր մէկ ու կէս ա-
միս առաջ մայրաքաղաքս եկած էր Մշոյ
Ս. Կարապետ Վանուց միաբաններէն
Արթ. Գաբրիէլ վարդապետ Խաչատուր-
եան, Մշոյ հայաբնակ Կէմիկ գիւղի
եկեղեցւոյն և կալուածոց գրաւման
խնդրոյն առթիւ Վճռաջինջ Ատենին
ներկայանալու համար: Այդ եկեղեցին
ու կալուածներ ժամանակաւ տեղա-

կան իշխանութեանց ձեռամբ Սիւթցի
Աշիրաներէն Մոլլասուլի-զատէ Ապ-
տուրահման աղայի վաճառուած լինե-
լով, Մշոյ ազգայինք դատ բացած էին
տեղական իշխանութեանց առջև զա-
նոնք վերստին ձեռք անցնելու համար և
հինգ տարի դատը շարունակելէ յետոյ,
աննպատակ վճիռ ստացած էին: Այս
վճռոյն դէմ էր ահա որ բողոքելու
կուգար Գաբրիէլ վարդապետ: Ս. Պատ-
րիարք Հայրն յիշեալ վարդապետի
ձեռք գտնուած պաշտօնական թղթերն
առնլով, Պատրիարքարանի փաստաբան
Եօրտամեան Աւետիս էֆէնտիի ձեռամբ
վճռաջինջ Ատենին յղած էր զայնու:

Արդ, Վճռաջինջ Ատենին յայտարա-
րած լինելով թէ Մշոյ ազգայնոց կողմէ
իրեն յանձնուած երաշխաւորագիրն
օրինական թերութիւն կը պարունակէ,
պահանջած էր որ այդ թերին լրացուի:

Ասոր վրայ, Գաբրիէլ վարդապետ
երաշխաւոր ցոյց տալով Պալատի աղ-
այիններէն Զն. Երչցի Անտօն Բէհեան,
Վճռաջինջ Ատենին ձեռնարկեց գործոյն
քննութեան և յիշեալ վարդապետին
յանձնեց պէտք եղած Իլմուխապէրն՝
նախորդ վճռագրոյն գործադրութիւնն
արդիւնդ: Այս Իլմուխապէր երկու օր ա-
ռաջ յղուեցաւ Մշոյ Առաջնորդարանին:

Նախկին երաշխաւորք՝ Կարապետ
և Յակօր եղբարք Բալանչեան տը-
ձուկուած են երաշխաւորութենէ և
Ապաւիրում հման աղա հրաւիրուած է
մայրաքաղաքս գալ:

—Տէրսիմի կուսակալ Օսման փաշա
այս օրերս այցելութիւն տուած է Հայոց
Միացեալ Ընկերութեանց Չմէկաճադի
վարժարանին: Ն վստմութիւն յոտ-
կապէս Չմէկաճադ երթալով, ճիշդ ե-
րեք ժամէ աւելի կեցած է վարժարա-
նը, քննած է բոլոր աշակերտները և
իւր գոհունակութիւնն յայտնելէ յետոյ
Գեր. Առաջ. Տեղապահ Հօր և վարժա-
րանին ուսուցչաց, մեկնած է գրամա-
կան պարգեւ մ'ալ տալով Միացեալ
Ընկերութեանց:



ՀՐԴԵՀԻ ԴԵՄ ԱՊԱՀՈՎԱԳԻՐՈՒԹԻՒՆ



NORTH BRITISH AND MERCANTILE Insurance company

ՆՈՐԹ-Զ ՊՐԻԹԻՇ ԷՆ՝ ՄԵՐԿԵՆԹԱՅԼ

Լնդոնի և Էյսթ-Ինդիաի ապահովումներն	Անգլ. Լիր.
Էյսթ-Ինդիաի	3,000,000
Բաժանորդագրեալ զբաղմունքներ	2,500,000
Վճարեալ »	625,000
Պահեստի դրամ հրդեհի պատահանութեանց դէմ	4,592,235
Կեանքի պատահանութեանց դէմ պահեստի դրամ	3,841,194
	6,038,429
Հրդեհի ձիւղէն հասոյթ	4,186,865
1883 տարւոյ	
Կեանքի ձիւղէն հասոյթ	554,307
1883 տարւոյ	
	4,738,172

NORTHERN Assurance company

ՆՕՐԹ-ԶԸՐՆ

Լնդոնի և Էյսթ-Ինդիաի ապահովումներն	Անգլ. Լիր.
Էյսթ-Ինդիաի	3,000,000
Բաժանորդագրեալ զբաղմունքներ	300,000
Վճարեալ »	
Պահեստի դրամ հրդեհի պատահանութեանց դէմ	844,874
Կեանքի պատահանութեանց դէմ պահեստի դրամ	4,778,300
	2,890,174
Հրդեհի ձիւղէն հասոյթ	520,206
1883 տարւոյ	
Կեանքի ձիւղէն հասոյթ	254,572
1883 տարւոյ	
	774,778

Ստորագրեալն իւր բազմաթիւ յաճախորդաց և քաղաքի ընդհանուր յարգոյ հասարակութեան կը ծառայուի թէ ինքն վերոյիշեալ երկու ընկերութեանց միացեալ գործակատար ընտրուած ըլլալով, այնպիսի դրուածեան մը մէջ կը գտնուի, որով հրդեհի դէմ ապահովութեան մեծ դիւրութիւններ կը մատուցանէ:

Ապահովութեանց կարգադրութիւնները կը բաղկանան երկու ընկերութեանց մէջ համեմատական բաժանումէ մը, և այսպէս ապահովութեան և դիւրութեան աւելնալովն ընկերութիւնս ալ կրնայ աւելի մեծագուծաբար ապահովութիւն բռնողներու ինքզինք ներկայացնել:

Գրեթէ ամեն կարգի վտանգաւոր ապահովութիւնը կրնան ընդունիլ, ինչպէս Բերայի, Ղալաթիոյ և Պոլսոյ մէջ, նոյնպէս մօտակայ քաղաքները, գիւղերն և գաւառները:

MARITIME

Insurance Cie limited of Liverpool
Capital Lt. 500,000

ՄԱՐԻԹԱՅՄ

Ծովային ապահովումներն Էյսթ-Ինդիաի
Զբաղմունքներ 500,000 Անգլ. Լիր

Ստորագրեալը, շրջանաւերու և առաջատանաւերու մէջ ի վաճառքներն ու կարասիները խիստ օգտակար պայմաններով ապահովելու իշխանութիւն ստացած է ընկերութեան կողմէ:

Գիններուն և այլոց վրայ տեղեկութիւն ստանալ ուղղութեամբ պէտք է դիմեն Կալաթիոյ, Քոմիսիօն Խանի անկեմը, երկրորդ կամուրջին վրայ նայող սենեակին, առ:

Կ. Պոլսոյ Ընդհ. Գործակապար յիշեալ Էյսթ-Ինդիաի
ԳԱՌՆԻԿ Յ. ՍԵՐՈՐԵԱՆ


ԳՈՒԻՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳԻՐՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՐԴԵՀԻ ԴԵՄ ՌԵԼԻԵՆՍ

Ծովային ապահովագրութիւն: -Դիմել առ գործակատարն ընկերութեան, Պ. Ժ. Վ. Ուելթալ, Եօրկիատիս Խան Պահչէ - գաբու, Պոլիս: Կամ Ղալաթիոյ, Ալեքսիատի Խան Թիւ 15:

**ԼՈՖԹԸՆ ԵՒ ՉԻՄՆԵԼ
ՄԹԵՐԱՆՈՑ
ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ
ԳՈՐԾԵԱՑ**
ԳԵՒՐԳՃԻ ԳԱՐՈՒՍԸ, ՂԱԼԱԹԻԱ



«ՐԻՍՆ» Մականուանեալ հնձող մեքե-
նայն երկու ծիով կը քաշուի և կը կշռէ
300 օխա :

ԳԻՆ՝ 35 ՕՍՄ՝ ՈՍԿԻ Է

Մեքենային կատարելագործութիւնը ե-
ւրաշխաւորեալ է : Գնողըն երբ գոհ չիլինի ,
կրնայ ետ առնուլ իւր ստակն :

502

**ԺԱՄԱԳՈՐԾ
Գ. Է. ՍԵԼՎԱՃԵԱՆ**

244 — ՄԱՀՄՈՒՏ ՓԱՇԱ ԳԼՈՒԽ — 244

30 142
ՖՐՆԲ ՂՐՇ



Ֆրանսայի ամենէ համ-
բաւաւոր գործարաններէ
միոյն մէջ խիստ խնամք
պատրաստել տուած է նշա-
ւակեալ գնով նմանը ցարդ-
չտեմնուած 15 սանդիմեզը
երկայնութեամբ խիստ ձե-
ւաւոր, զարնող, շարաթը
մի անդամ լարուող, պատի
ժամացոյցներ : որք ընդու-
նելութեան սրահներու, սե-
նեկաց, վարժարանաց եւ
գրասենեկաց վայելուչ եւ
յարմարագոյն են, և որոց
երկար տարիներ ամենայն
կանոնաւորութեամբ բանիլն
կ'երաշխաւորէ :

Յեշտալ վաճառատան
մէջ կը գտնուին նաեւ խիստ
աժան գներով լաւ բանող
ընտիր ժամացոյցներ :

Գաւառներէ եկած յանձ-
նարարութիւնք փութով եւ
ճշգրութեամբ կը կատար-
ուին :

ՄԱՆՈՒԷԼ Կ. ՄԻՐԱՍՈՐԵԱՆ

Ն Կ Ա Ր Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ուղեւորութիւն է Հայաստան Գաւառ

Սրբեւեռն Տաճարանէ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆԻՔ

Սարէն և Ձորէն, Հնէն և Նորէն

ՊԻՏՆՆԻ ԳԻՏՆՈՑ

ՄԱՍՆ Գ. և ՎԵՐՋԻՆ

ՊՍՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ձօն առ Խրիմեան Հայրիկ . Կանխարան .
Հրահանգ . Տեսութիւն մը . Լեզուաբանական
գիտողութիւն մը . Նամակներ . Սարերանի

դաւառն և իւր գիւղօրայքն . Քաջերուն-
եաց դաւառն և իւր գիւղօրայքն . Հարթ
դաւառն և Մանազկերտ՝ հին բերդաքա-
ղաքն իւր գիւղերով . Կարմիր վանքն և
կռապաշտական քարը . Այազունեաց կամ
Հացեաց դաւառն (Վերին և Ներքին Պու-
լանըխներ) իւրեանց գիւղերովն . Մէճիտ,
լուի գեղջկուհին . Հասան-Կորան և իւր բը-
նակիչքն . Հետաքրքիր յայտնութիւն և հին
խաչաքար մը . Խնուս դաւառն և իւր գիւ-
ղօրայքն . Ս . Կարապետի ամայացեալ վանքն .
Կարնոյ դաւառն , քաղաքն , գիւղօրայքն և
վանօրայքն . Հայ գիւղացւոց տարեկան կե-
նաց չորս եղանակի համառօտ նկարագիրն
իւրեանց բոլոր երեւոյթներով . Քրդաց վե-
րայ համառօտակի . Գաւառական կրճատեալ
անուանք :

Ս. Լուսինատէր Կ. Ս. ԻԻԹԻՒՃԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼԻՔ ԼՐԱԳՐՈՑ